



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99-82

Գրական - Գեղարվեստական աճագիր

1917

№ 1-2-3/4

Ք/Ֆ/Կ

№ 212
891.99.82
4-87

III 21

ՎՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԿՈՄԻՏԵ

Ն Ի Ի Յ Ե Ր Ո Ի Ն Ե Ն. — Վ. ՎԱԼԱԴԵԱՆ, ԱՐՇԱ-
Ի Ի Ր ԽՈՆԴԿԱՐԵԱՆ, ՌԱՖԱՅԷԼ ԶԱՐԴԱՐԵԱՆ, ՍՏ.
ԶՕՐԵԱՆ, ԱՐՄԵՆՈՒՅԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ, ՎԱՐՍԵՆԻԿ
ԱՂԱՍԵԱՆ, Ն. ԱՖՐԻԿԵԱՆ, Մ. ԷՓՐԻԿ, ՊԱԶԱՐԷ,
ՄԵԾԱՏՈՒՆԵԱՆ, Ն. ՏԻՐՈՍԵՆՑ, ԳԻՍԱԿ ԵՒ ԱԻԱԳ
ԿՈՄԻՏԵԱՆ:

2 1/2



1

Թիֆլիս

1917

1917

1851

1851

4-02 25.

ገጽ ፩

ገጽ ፩

5092

ገጽ ፩

1917

1700 և-հ.



925-55

ՏՊԱՐԱՆ «ՄԱՍՈՒԼ», ԹԻՖԼԻՍ

„ՊԱՏԱՆԻ“-Ի ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Պատմութեան յանձնելով մեր ձեռնարկած «Պատանի» գրական-գեղարւեստական և քննադատական ամսանախի վեց տարւայ հրատարակութեան գնահատութիւնը, ձեռնարկում ենք մի նոր ամսանախի, որ լինելու է «Պատանի»-ի բնական յաջորդը:

Եթէ ուզենանք, երկու խօսքով բնորոշել «Պատանի»-ի կատարած դերը մեր գրականութեան մէջ, կասենք, որ նրա հրատարակութեան սկզբից (1910 թ.) մեզանում ստեղծւեց սկսնակ գրողների հոսանք, որն արդէն ուշադրութեան արժանի է դարձել և տւել շնորհալի անհատներ. մինչդեռ յիշւած ժամանակից առաջ տեղի չէ ունեցել այնպիսի երևոյթ, որ զարկ տար նման հոսանքի առաջ գալուն:

Տարիներ գրականութեամբ զբաղւելուց յետոյ, բնականաբար այդ սկսնակները պէտք է զարգանային և որոշ չափով կազմակերպւէին ու այսօր առիթ ծառայէին, որ մենք ամսանախի վրայից վերացնէինք «Պատանի» անունը, անւանելով «Գրական-Գեղարւեստական Ամսանախ»:

Ինչպէս անցեալում «Պատանի»-ն նոր, անփորձ գրողների արտայայտիչն է եղել, այժմ էլ այս Ամսանախը լինելու է կազմակերպւած երիտասարդ գրողների արտայայտիչը և ձրգտելու է իր աշխատակիցների ինքնուրոյնութեանը զարկ տալ՝ ջանալով սրբագրել ու վերացնել հնցած տարրերը և շեշտել, ուժեղացնել հարազատութիւնը, բնականն ու ձևի պարզութիւնը նրանց ստեղծագործութեանց մէջ:

Մեր մի քանի տարւայ գործունէութեան ընթացքում նկատել ենք, որ նոր գրել սկսողները իրենց ընդունակութիւնը սպառում են զանազան նիւթերի, զանազան ձևերի վրայ, առանց իմանալու իրենց կոչման բնագաւառը: Այս հանգամանքն առիթ է ծառայել մեր նպատակի մէջ ընդգծելու մի շատ զգոյշ ու պատասխանատու կէտ. այն է՝ Ամսանախի միմիայն անկազմակերպ աշխատակիցներին մատնացոյց անել իրենց ընդունակութեան և ինքնուրոյնութեան բնագաւառը:

Անտեղի չի լինի ասել որ այս կարևոր և էական նշանակութիւն ունեցող մատնանշումն արել ենք և «Պատանի»-հրատարակութեան միջոցին ու մի քանի աշխատակիցներ՝ վերաբերմամբ հասել նպատակին:

Մի կողմից մեզանում գեղեցիկ գրականութեան արտայայտութեան համար քիչ ասպարէզ լինելը, միւս կողմից օրաթերթերում ու պատահական հանդէսներում երևան եկող երիտասարդ գրողների համար ստեղծած աննպաստ ու մնասակար դրութիւնը և մանաւանդ գեղեցիկ գրականութեանը դարկ տալու ցանկութիւնը առիթ են ծառայում, որ Ալմանախում համախմբեն բոլոր ցաք-ցրիւ եղած ուժերը՝ դարձնելով նրան միմիայն գեղարւեստական երկերի ժողովածու:

Նոր Ալմանախը լինելով գերազանցօրէն ինքնուրոյն նիւթերի հաւաքածու, քիչ տեղ կը տրւի թարգմանական գրականութեանը, այն էլ առնւած մեր հարևան ազգերի, ըստ հնարաւորութեան, գեղեցիկ գրականութիւնից:

Ահա այս նկատումներով ձեռնարկում ենք «Գրական-Քեղարւեստական Ալմանախի» հրատարակութեանը՝ օժանդակողներով մի խումբ երիտասարդների անմիջական աջակցութիւնը, մի բան, որ ունեցել ենք և «Պատանի»-ի հրատարակութեան ընթացքում:


Ուստի ասպարէզի վրայ եղող բոլոր այն երիտասարդ գրողները որոնք հրապարակ են եկել 1909 – 10 թ. յետոյ, հրաւիրւում են աշխատակցելու Ալմանախին, որոնց զուգընթաց տեղ է տրւելու նաև շնորհքով սկսնակներին:

Այսպիսով, ապաւինած մեր ոգեկան կորովին ու գոհաբերութեան պատրաստակամութեանը՝ նկատի չառնելով այն ծանր պայմանները, որ համաշխարհային պատերազմի շնորհիւ ստեղծւել է հրատարակչական գործի համար, սկսում ենք մեր նոր գործը՝ «Գրական-Քեղարւեստական Ալմանախի» հրատարակութիւնը:

Մ. ԷՓՐԻԿԵԱՆ ԵՆ Ն ՄԿՐՏՉԵԱՆ

Փետրւար





ԶՈՔԱՆՉԻ ՄԱՅԸ

— Տղէրք, թագա խաբար ասեմ—մեր Մակիչի զոնքաչն ա մեռել...

Տղաները ծիծաղեցին: Լաւ էին տրամադրւած՝ հաց ու տաք կերակուր էին ստացիլ երեք-չորս օրւայ անդադար արշաւանքից ու քաղցից յետոյ: Եւ ծիծաղելով սկսեցին կատակներ անել.

— Զոնքաչները քանի շատ մեռնեն՝ էնքան լաւ ա փեսէքի համար:

— Զոնքաչն ու սատանի էծը՝ մի գլուխ հենց մկկում են... հա հա-հա...—Սրախօսեց Արտէմը:

— Ամեն զանքուչ մի սատանայ ա տեղաւր:

Նազարը (լուր բերողը) փորձեց հասկացնել, թէ. «Չէ, տղէրք, Մակիչը գէշ տխրել ա. ըրևում ա զոնքաչին շատ ա սիրելիս ըլել». բայց նոր ծիծաղ ու հանաքներ թափւեցին ամեն կողմից և Նազարն ինքն էլ հրհրալով բացականչեց. «Հէրն անիծած զոնքաչի էլ, հաներոջն էլ... Սաքօ ջան, Սաքօ, էդ մսիցը մի կտոր դէսը տուր»:

— Ա՛ռ... Բա կամաւոր մարդը զոնքաչի համար դարդ կանի, որ ասում ես թէ Մակիչը դարդ ա անում:

— Դէ օրէնք ա ախր,—նկատեց մէկը, —մի քիչ տխրել ա հարկաւոր. մարդ պիտի ինքն իրան զօռի՝ տխրի, որ խալխն ասի թէ հա՛ էս մարդը տխրում ա, օրէնքը լաւ ա պահում: Մակիչի զոնքաչը որ մեռել ա, Մակիչը պիտի...

— Խօխէք,—բարձր ձայն տւեց յանկարծ դարաբաղցի Բէգլարը, — ձեզանայ հո՛ւ կկարայ էս ոսկուրը իւրան մատներաւը կտորի.— և ամենքը մէկէն մոռացան Մակիչի զոնքաչին...

Օրը մթնեց, տղաները թէյ պատրաստեցին, խմեցին, կերան նորից և ապա ծոյլ-ծոյլ, յոգնած-ախորժած՝ ցրիւ պառ.

կոտեցին խոտերին: Մակիչի ընկեր-զինւորներից Նազարը մի-
այն վերստին հետաքրքրւեց ու յօրանջելով հարց տւեց, թէ՛
«Տղերք, Մակիչը բա որդի՞ մնաց էսքան ժամանակ»: Հարց-
րեց ու քնեց իսկոյն:

Իրար յետևից քուն մտան միւս տղաներն էլ և երբ, գի-
շերւայ պահուն եկաւ ինքը Մակիչը—ամենքը խոր ու խաղաղ
շնչում էին լոռթեան մէջ: Զգոյշ, որ ոչ ոքի չզարթեցնի,
Մակիչն անցաւ, յուշիկ պառկեց գետնին՝ քնելու մտադրու-
թեամբ: Բայց քուն չեկաւ նրա աչքերին: Նա շարունակ կաս-
կածոտ, որ մի գուցէ տղաներից զարթնող լինի,—մտածում
էր՝ հայեացքն անհանգիստ: Բազմազան մտքեր գալիս՝ իրար
էին խառնւում և իրար դուրս մղելով՝ ալիք-ալիք անցնում-
հեռանում էին...

— Էս ի՞նչ փոր ձանք է՝ գլուխս է եկել,—ինքն իրեն
զննաց Մակիչը մի անգամ... երկրորդ անգամ... երրորդ ան-
գամ. և մինչև լուսաբաց՝ նա անվերջ ու անվերջ կրկնեց «փոր-
ձանք» խօսքը՝ միշտ ակամայ, անգիտակցաբար, մտքերից ազդ-
ւած ու տարւած:

— Մակիչ... — Առաւօտ կանուխ ձայն տւեց Սաքօն, որ դուրս
գնացած՝ պաղ-պաղ ջրով լացւել վերադարձել էր. — բարի լուս:
Զոնքանչդ ա մահացել, արա: Բա էդ որդեան իմացար որ:

— Զոնքանչն ա ինքը արքայութենիցը հեռագիր դարկել...
հա-հա-հա,— կատակեց Արտէմը և տղաներն էլ անց է՝ ուղեցին
նոր հանաքներ անել... Մակիչը, սակայն, զոպւած ախ քաշեց
և ամենքը սուս արին: Այլևս ոչ ոք զոքանչի անունը չտւեց.
Իւրաքանչիւրը գլխի ընկաւ, որ Մակիչի վրայ շատ է ազդել
նրա մահը. և գլխի ընկնելու հետ՝ բոլորն էլ մնացին սակայն
իրենք իրենց տարակուսած, թէ այդ ի՞նչ շտեանւած զոքանչ
է եղել Մակիչի զոքանչը:

Յուրտ օրեր էին. երկինքն անվերջ մառախլած՝ ձիւն էր
թափում շարունակ...

— Շունն էլ չի ուղենայ դուրս գնալ էս ցրտին՝ թէզուզ
մի լիդր դմակ տալու լինեն... հա-հա-հա,— ծիծաղեց Արտէմը:
Բայց քիչ անց, դրսից եկաւ Սաքօն ու յայտնեց, որ ջոկատա-
պետը հրամայել է անմիջապէս դուրս հանել տասնեակը:

— Դիրք պիտի պահենք, ամեն զվօղիցը (ВЗВОДЪ) մի տասնակ պիտի էթայ:

Տղաները սկսեցին տրտնջալ: Հազիւ էին տեղաւորուել դրսուել, տաքացել: Աւեր գիւղի մէջ մի ընդարձակ օդա գտած, գետնին խոտ էին փռել խիտ-խիտ, փայտ էին կիտել ու վառում էին առատ-առատ:

— Շուտ արէք, տղէք, պարոն Պաւլին (աւագ քսանհինգապետ) մեզ սպասում ա... Մակիչ, վեր կաց, վեր կաց: Հը՞, դեռ հլա միտք ես անո՞ւմ՝ էրէզլանից դէսը: Բան չկայ, թէ որ էսօր կուի ոաստ գանք՝ զոնքաչդ էլ կմոռանաս, կնիկդ էլ:

— Ես չեմ կարայ հետներդ գամ, — պատասխանեց Մակիչը կոշտ՝ առանց նայելու Սաքօյի կողմը:

— Ո՞նց թէ, — զարմացաւ Սաքօն, — քու ուզել-չուզենալո՞ւցն ա գնալդ. հրամայլած ա պիտի էթանք:

— Ես չեմ կարայ...

— Բանը որ էդպէս ա, — ծիծաղելով մէջ ընկաւ Արտէմը, — իմ զոնքաչն էլ ա մեռել՝ ես էլ էթում չեմ... հա-հա-հա... — և արագ ոտքի ելնելով՝ փամփշտակալները ձգեց ուսերին: — Տնաշէնի մարդ, զանքաչ ա՛ հօ կնիկդ չի, որ մահը ցաւ տայ:

Տրտունջներն անցան և տղաները, հրացաններն առած, հատ-հատ դուրս եկան օդայից և շարուեցին դրսում:

— Ես հիմա գալիս եմ, որ վաշտապետիցը իրաւունք առնեմ՝ տուն էրթամ, — ասաց Մակիչը շարքի կանգնելով. — Ինձ օտպուսկ ա հարկաւոր:

— Ա՛ յիմար, մինչի դու տուն հասնես էստեղից՝ զոնքաչդ հողի միջին կը փթի կը պրծնի, — մէջ ընկաւ Արտէմը:

— Չէ, պիտի օտպուսկ վերցնեմ:

— Չանքաչի համար էլ բա մարդ...

— Խաբար չես, Սաքօ ջան, ախր չես իմանում թէ ինչու՞մն ա բանը — և՛ կշտամբանքով և՛ խնդրախառն պաշտպանւեց Մակիչը, ու այդպիսով հարցը փակեց նորից. Սաքօն էլ լռեց, Արտէմն էլ լռեց:

Տղաները շարժուեցին: Չիւնը թանձր էր, նրանց ծնկներին էր հասնում: Պաղ, թեթև քամի էր փչում դիմացի լեռան կողմից...

— Կը բարձրանաք այդ սարը, — կարգադրեց վաշտապետը հաւաքլած տասնեակներին, — ու կը մնաք՝ մինչև որ միւսները

գան՝ ձեզ փոխարինեն: Պինդ կացէք, չմըսէք: Լաւ հսկէք. թշնամին գուցէ փորձի յանկարծ վրայ տալ: Գնացէք, բարի ճանապարհ:

— Աջ ուս առաջ, քայլ մարշ, — խրպոտ ձայնով կօմանդարեց Պաւլին և տղաները գնացին:

Մակիչը արձակուրդի մասին խօսք իսկ չասաց ոչ վաշտապետին, ոչ խմբապետին, որ քիչ հեռու կանգնած՝ տղաներին էր նայում:

Վերելքը դէպի լեռը դժւարին էր՝ ձիւնի պատճառով: Հմուտ ուղեցոյցը ամենայարմար ուղիները՝ շաւիղներն էր ցոյց տալիս. բայց և այնպէս տղաները շարունակ սայթաքում, ընկնում, գլորտւում էին ձիւների մէջ. ուստի խումբը յաճախ դադար էր առնում, որ հանգստանայ...

— Մակիչ. — դադարներից մէկին ձայն տւեց Սաքօն, — ինչ բանի ես: Արի էստեղ, մի քիչ զրից անենք:

Մակիչը մօտ գնաց և լուռ հարցական կերպով նայեց նրա աչքերին:

— Էն խի՞ ասեցիր թէ խաբար չեմ, իմանում չեմ:

— Հա, դրուստ եմ ասում. դէ ի հարկէ որ իմանում չես: Ուրիշի դարդը բա մարդ կիմանայ, մինչև որ մարդն ինքը չասի:

— Ասա տեսնենք, էլ խի՞ ես բերանդ ջուր առել: Հը՞. ինչ ա պատահել որ:

— Արտէմն էն որ ասում էր թէ զոնքաչս ա մեռել, հօ կնիկս չի մեռել... — սկսեց Մակիչը և ինքն էլ հենց կանգ առաւ ու յետ՝ դէպի իրենց կեցած գիւղը նայելով՝ մտածեց կարծես:

— Ճիշտ ա ասում Արտէմը. զոքանչը ջուր բան ա, կնիկը ջուր: Կնիկդ, փառք Աստծոյ, հօ սաղ ա, առողջ ա:

— Է՛էհ... — ցաւոտ շունչ արձակեց Մակիչը ու հիմա աչքերը լեռան գաղաթին ձգեց... վեր մտիկ տւեց, վար մտիկ տւեց... — Կնիկս ջահէլ ա, հիմա մենակ ա մնալու... հասկանում չես ախր:

Սաքօն գլխի ընկաւ, հետաքրքրւեց՝ նոր բան ուղեց հարցնել:

— Էս ժամանակիս, ջահէլ կնգան անտէր թողնելը,— կանխեց նրան Մակիչն ինքը... Դժար բան ա, մի խօսքով, մտածելու բան ա: Ես էստեղ, կնիկս էնտեղ՝ կշտին ոչ ոք չկայ, որ նեղ վախտին օգնի, խորուրդ տայ... Մտածելու բան ա: Բա ո՞նց չմտածեմ. ջահէլ կնիկ ա ախր: Քանի գոնքաչս սաղ էր՝ հանգիստ էի: Ո՞վ կարար կնգանս մի թթու խօսք ասէր ես ծուռ աչքով մտիկ տար: Զոնքաչս լաւ պահում պահպանում էր:

— Յառանջ...— հնչեց Պաւլիի խրպոտ ձայնը և տղաները շարունակեցին վերելքը:

— Մակիչ, հէյ Մակիչ, — հեռւից դի տւեց Արտէմն ու քահ-քահ ծիծաղեց. — էս ձիւնն ա աւելի խորը թէ՞ քու դարդը:

Քանի վեր բարձրացան տղաները, մէզ-մառախուղն այնքան աւելի խտացաւ, քամին էլ սաստկացաւ՝ բուք-բորանի փոխւեց:

— Էս դիամաթին բա կռիւ անել կըլի՞, — սրթսրթալով նկատեց Նազարը. — հրացանի գատվօրը քաշել կարձս որ:

Հասան լեռան գլխին, որ ժայռոտ, նեղշերտ տարածութիւն էր կազմում, և Պաւլին կարգադրեց, որ տղաները շրջաթայով ցրիւ անցնեն քարքարուտի երկու ընթացքով՝ ծայրից ծայր. «Ո՞վ ոնց կարենայ՝ մի կերպ տեղաւորւի, ցրտիցը ծածկի: Բանցը ձէնով խօսալն արգելւած ա հա՛: Համ էլ իրար կուշտ շատ չհաւաքւէք հա՛: Իմացա՞ք... Մենք ցէպ (շղթայ) պիտի պահենք հա՛...»

Եւ ով ինչպէս կարողացաւ՝ կծկւեց ժայռերի արանքներում, հինգ հոգուց բացի, որոնք պարտաւոր էին անմիջական հսկողութեան առաջին հերթը պահել: Մակիչը քիփ փաթաթւեց քուրքի մէջ, փափախը սեղմ քաշեց ճակատին ու ականջներին, վիզը քաշեց ներս և սկսեց արագ-արագ օդ արտաշնչել, որ երեսն ու ձեռքերը տաքանան:

— Մակիչ...

Մակիչը ձայն չհանեց, մնաց անշարժ, զգոյշ փչեց ձեռքերին:

Սաքօն մտ եկաւ. «էդ ի՞նչ անքամի, լաւ քիւնջ ես մտել, արա. տեղ տուր՝ ես էլ մի պատառ տաքանամ, թէ չէ էս ա մեզ են քշելու՝ չասաւօյ կանգնենք... Հը՞, Մակիչ»:

Մակիչը տհաճ ու դանդաղ տուրուր եկաւ ու նեղ տեղ բացեց Սաքօյի համար: Սաքօն նստեց և երկուսով սեղմ հուպ եկան իրար...

— Էսպէս լաւ ա՛ մէկ-մէկու կողք կը տաքացնենք, — ասաց Սաքօն ժպտալով ու նայեց՝ որ ընկերոջ երեսը տեսնի և նորից ժպտայ. բայց ընկերը բնաւ չբարձրացրեց, չհանեց գլուխը քուրքի տակից, շարունակեց լուռ կենալ...

— Հը՞, Մակիչ... Ուրեմն ասում ես կնիկդ հիմա մենակ ա մնացել: Է՛, ի՞նչ կայ որ. դու շմանն էստեղ ա՛ էնդեղ հօ չի՛, որ վնաս տայ: Էդքան շատ մի մտածի:

— Ես պիտի օտպուսկ վերցնեմ, — պատասխանեց վերջապէս Մակիչը՝ դարձեալ կոշտ-կոշտ:

— Էս վախտին քեզ ո՞վ օտպուսկ կը տայ. մեծ կոխներ ենք սկսելու՝ առաջ պիտի էրթանք, օբչի նաստուպլէնի... Բա սիրտդ ուզում չի՞, որ ինքդ էլ կոխներին լինես:

— Բա որ կնիկս անտէր ա մնացել:

— Դու էլ հենց անտէր հա՛ անտէր: Խի՞ պիտի անտէր մնայ որ. լաւ-լաւ բարեկամներ ես թէգուզ հարևաններ քիչ կան աշխարհիս երեսին: Մարդս մարդով կըլի: Համ էլ տարիներով չեն պահելու քեզ էստեղ: Օբչի նաստուպլէնին որ ա-նենք-պրծնենք, թէ որ սաղ մնացինք՝ դու էլ, ես էլ, Արտէմն էլ, Նազարն էլ՝ մեր սաղ տասնակով օտպուսկ կերթանք:

— Ձեր բանը ուրիշ ա: Ես էքուց առաւօտ էրթալու եմ:

— Ախր, արա, դիպիս էլ էնպէս պիտի կարծենք, թէ Մակիչը մեծ կոխների ձէնը լսել՝ պուկ ա ուզում գալ...

— Էն սուրբ մեռօնը վկայ, Սաքօ ջան, դրա մասին ըսկի չեմ մտածում... Բա ես կուից վախեցած կամ, որ էդպէս բան ասէք, թէ ես պուկ եմ գալիս:

— Ես չեմ ասի, ուրիշը կասի, այ Մակիչ: Մարդիկ են՝ կասեն:

Մակիչը վշտացած, գլուխը դուրս հանեց քուրքի տակից ու օրօրեց մի քանի անգամ: Յետոյ սրտնեղեց, յուզեց ու բարկացած թքեց... «Ես մեղաւոր եմ, որ կոխները հենց հիմա են սկսում. զոնքաչս գիտէր: Ես կուից փախչող եմ... Հէրն անիծած, ով կուից վախենայ ես փախչի: Միշտ հետս ես ըլել, տասնըչորս կուիւ ենք արել միասին... Ումանիցն եմ

պակաս կուել: Տրէտի ստէպէնս*) էլ որդի որ ա դուրս կը գայ: Խի՞ պիտի վրէս խօսեն: Բա չէ՞ն հասկանում, որ կնիկս անտէրութիւնիցը, ով ա գիտում, հազար ու մի տեսակ նեղութիւն ա քաշելու: Բա մեղքը չի՞... Չահէլ ա... սիրուն կնիկ ա: Մինչև հիմա քեզ ասած չկամ, Սաքօ, ամա իմ կնիկը սիրուն բան ա: Բօյը, բուսաթը, աչք-ունքը, կաշւի սիպտակութիւնը...

Մակիչը քիչ էր մնում ժպտայ, գլարթանայ, բայց մէկէն բեկւեց-փոխւեց ձայնը՝ թնդաց սրտմտութեամբ լի... «Հէրը կանիծեմ, կը սպանեմ, ով իմ կնգան դիպչի»:

— Ախր, այ Մակիչ...

— Չէ...—կտրուկ՝ բռունցքը ծնկան զարնելով ու յամառ, ատամները պինդ իրար հպած՝ Ֆշշացրեց Մակիչը. և ապա բաւական անց, աւարտեց իր միտքը, թէ՛ «Չէ, պիտի տուն էրթամ, էքուց ես էլօր անպատճառ»:

— Բա որ իրաւունք չտան:

— Չեն տայ—ես իմ անելիքը կանեմ:

— Ուզում ես փախչէս:

— Կիմանաս վերջը... Երկար որ մտածեմ՝ բան չի դուրս գայ:

Սաքօն այլևս խօսք չասաւ, ոչ էլ Մակիչը: Երկու ժայռի արանքում կծկւած, երկուսն էլ լուռ կեցան, մինչև որ նազարը լուր բերեց, թէ հսկելու հերթը իրենցն է հիմա:

Թշնամին իսկապէս որ փորձ արաւ՝ լեռան կողմից յարձակում գործելու: Յարձակումը, երևի, նախապատրաստած էր եղել խնամքով և պէտք է որ վերջանար, ըստ յարձակող-ների ծրագրի, լրիւ յաջողութեամբ, այն է՝ լեռը պէտք է վերցւէր կարճ ու վճռական գրոհով:

Բայց տղաները պինդ փակեցին ճամբան, ապա ուժեղ հակայարձակումով յետ մղեցին թշնամուն և մի քսան հոգի էլ գերի առան:

Արտէմը ծանր վիրաւորւեց: Վիրաւորւեց և Բէգլարը, բայց թեթև: Վիրաւորւեցին տաս-տասներկու ուրիշ տղաներ: Հինգ հոգի էլ սպանւեցին: Սաքօն ու Մակիչը մնացին անփաս:

*) Երբորդ աստիճան (Գէորգեան Խաչի մասին է խօսքը):

Կուլից յետոյ, երբ արդէն մթնել էր, նոր տղաներ եկան դիրքերը պահելու. հները իջան ցած, գիւղը վերադարձան՝ պակասած, յոգնած, սառած:

Յաջորդ օրը Մակիչը յատուկ գովասանքի արժանացաւ խմբապետի կողմից այն բանի համար, որ «Դու, — ասաց խմբապետը, — տղամարդի պէս կուել ես, ընկերներիդ մի քանիսին էլ հա՛ ել ես նեղ վիճակից: Ապրես, միշտ այդպէս քաջ եղիր: Ես քեզ նորից պրէստաւիտ *) կանեմ»:

Մակիչը խորհրդաւոր նայեց խմբապետի երեսին, բան ասելու միտք ունէր կարծես. բայց ոչինչ չասաց, և երբ խմբապետը՝ «հիմա գնա, լաւ հանգստացիր» խօսքերով նրան ազատ թողեց, նա խոնարհ պատիւ տւեց ու շուռ եկաւ գնաց օդան...

— Մակիչ... ժպտալով դիմաւորեց նրան Սաքօն:

— Չո՞ւ, — ժպտաց և Մակիչը ու արմուճնկով բրթեց ընկերոջ կողքը, — ի՞նչ ա, ի՞նչ ես ուխդ բաց արել՝ ծիծաղում ես... Հայվանի գլուխ:

Սաքօն բարձր ծիծաղեց. — «Բա օտպո՛ւսկը, օտպո՛ւսկը... Հը՞, Մակիչ. բա օտպո՛ւսկը»:

Մակիչը մի վայրկեան մտածեց, յիշեց, տատանւեց... «Հէրն անիծած... Որ ասի տուն պիտի էրթամ՝ կէրթամ, կէրթամ: Թէգուզ տռաքւես՝ կերթամ»:

— Ես խի՞ պիտի տռաքւեմ, արա. մտածողը դո՛ւ ես, հօ ես չե՞մ:

Մակիչի տրամադրութիւնը փչացաւ: Սաքօն փոշմանեց, որ արձակուրդի անունը տւեց, և փորձեց զւարթացնել ընկերոջը: Բայց Մակիչը մնաց տրտում, մտազբաղ և պատառ անգամ չկերաւ այն խորովածից, որ Սաքօն էր պատրաստել...

— Կուլ չի գնում, Սաքօ ջան, այ... Կուլ չի գնում, — ասաց նա՝ կոկորդը ցոյց տալով:

Կէսօրին Մակիչը դիմեց Պաւլին և խնդրեց միջնորդել վաշտապետի ու խմբապետի առջև, որ իրեն արձակուրդ տան: Պաւլին զարմացաւ. «Վանհ...»

*) Представить — ներկայացնել (պարգևի):

— Շատ եմ խնդրում, պարոն Պաւլի... Լաւութիւնդ չեմ մոռանայ:

— Վահ... Գիժ ես, սարսաձեղ ես. էսպէս ժամանակ օտապուսկ կուզե՞ն: Գնա, գնա բանիդ: Միւս անգամ էլ չասես, ամօթ կը լինի:

— Չէ, պիտի... Շատ եմ խնդրում, պարոն Պաւլի...

— Ինչո՞ւ ես ուզում էրթալ: Քեզ ի՞նչ ա պատահել:

— Բան չի պատահել, պարոն Պաւլի... Հենց էնպէս՝ ուզում եմ մի տունս տեսնեմ: Տեսնեմ ու ձեռաց յետ գամ: Շատ չէ, պարոն Պաւլի, էրկու շաբաթ ժամանակ տուր:

— Վահ... Ի՞նչ վախտի օտապուսկ ա,— այլևս ուշադրութիւն չդարձնելով Մակիչի խօսելուն՝ ինքն իրեն նորից զարմացաւ Պաւլին ու թողեց հեռացաւ...

— Պատրօնդաշները վրաներիցդ չհանէք հա՛...— լսեց Մակիչը նրա խրպոտ ձայնը, որ հնչեց հեռում. «Լաւ պատրաստ կացէք հա՛...»

Մակիչը դողաց ցրտից ու բարկացաւ՝ քիչ էր մնում փղձկար: Մի ձեռքը բերանին, միւս ձեռքը կողքին զարկեց ու զարկեց մի քանի անգամ...

— Զանդ սատանայ ա մտե՛լ... Հը՞, Մակիչ: Ի՞նչ ա ասել Պաւլին: Խնդրեցի՞ր:

— Էն սուրբ մեռօնը վկայ, Սաքօ, հէրդ կանիծեմ, թէ որ մին էլ բան ասես զոնքաչիս մասին,— կատաղեց Մակիչը:

— Դրուստ որ խելքդ կորցրել ես,— մեղմ ու խուսափուն ասաց Սաքօն ու լռեց բոլորովին: Ոչ այդ օրը, ոչ յաջորդ օրերին նա այլ ևս ակնարկ իսկ չարաւ զոքանչի ու արձակուրդի մասին:

Տղաներն էլ իսպառ մոռացան, թէ Մակիչը զոքանչ է ունեցել երբևիցէ: Ամենքը լարւած, սպասողական դրութեան մէջ էին՝ կուրս դուրս գալու համար կազմ ու պատրաստ: Ինքը Մակիչն ևս նոր դիմում չարաւ արձակուրդ ստանալու մասին:

Կոիւր սկսեց վերջապէս: Տեց վաղ առաւօտից մինչև կէսօր: Ուժեղ կոիւ էր, բայց անորոշ վախճան ունեցաւ: Ուստի հետևեալ օրը նորից կոիւ եղաւ՝ նոյնքան ուժեղ: Այս անգամ թշնամին տեղի տեց և ապա շարունակ նահանջելով ազատ ճանապարհ էր տալիս մեր զօրամասին առաջ խաղալու առանց ընդհարումների:

Խուճբը մէկ շարաթւայ մէջ մօտ հարիւր վերստ հեռու անցաւ. և ամեն նոր շարժում դէպի առաջ՝ անհանգիստ էր անում Մակիչին...

— Շատ ենք հեռանում, — ասաց նա մի օր Սաքօյին տհաճ ու դժկամ:

— Հաւ ա էլի, քանի շատ էրթանք՝ էնքան աւելի շատ հայ կազատենք թուրքի ձեռիցը:

— Ասածս էդ չի. հասկանում չես... հեռանում ենք է, հեռանում... Մեր տեղիցը շատ ենք հեռանում... Կնիկս, կնիկս... Բա ոնց չես ուզում հասկանալ: Սիրտս ցաւում ա: Որ էսքան ժամանակ ձէն չեմ հանում, սուս եմ կացել, կարծում ես մոռացել եմ... Դարդս սրտիս տակն ա մտել, տանկը: Գիշերները վրէս քուն չի գալիս, մի գլուխ միտք եմ անում... էն սուրբ մեռօնը վկայ, Սաքօ, սիրտս կը ճաքի: Չեմ կարայ դիմանամ: Կնիկս հիմա, ո՛վ ա իմանում...

Սուքօն յարմար խօսք փնտրեց, որ ասի, բայց չգտաւ ու սպասեց, որ Մակիչը շարունակի: Իսկ Մակիչը յանկարծ թակեց գլուխը բռունցքներով, ընկաւ բերանքսիվայր ու հեկեկաց...

— Մաքթաղը... Մաքթաղը... Բա որ փորձանքի ուստ գոյ... բա որ օտար մարդ վրէն աչք դնի... Ես տղամարդ եմ, թասիբ ունեմ... Խի՞ պիտի էսպէս շարչարւեմ... Գեօքբագեօք ընես, ա՛ գոնքաչ, սպասէիր՝ գո՛ւ տարի մեռնէիր...

Մի հանգիստ օր, երբ խուճբը, լեռների շրջանից դաշտը դուրս եկած, անփոյթ ու զւարթ ցրիւ էր եկել մի բարեկեցիկ տաճկական գիւղի լայն հրապարակին, նազարը վազէվազ հասաւ Սաքօյին ու տղաներին, թէ.

— Տղէրք, Մակիչն ինքն իրեն ուզեց սպանել... Գիւլլէն փորի կողքովն ա անց կացել: Մօսինը ձեռիցն առանք:

Վ. ՎԱԼՍԳԻՅԱՆ



Ի Մ Ա Յ Ց Ե Լ ՈՒ Ն

Ամեն գիշեր՝ մէջ գիշերին
Լոյս է ծագում իմ շէմքին.
Լոյս է ծաղկում, յոյս է ցոլում,
Կոյս է կանգնում իմ շէմքին:

Կոյս է կանգնում և չի խօսում
Ու չի ասում ոչ մի բառ.
Միայն տխուր, համբը ու լուռ
Ինձ է նայում քնքշաբար:

Ինձ է նայում. և ոչ շարժում,
Ու ոչ շրշիւն հագուստի.
Միայն անուշ կուրծքը անուժ
Հուրն է յուզում իմ վշտի:

Հուրն է յուզում ու չի կանչում,
Մօտ չի գալիս նա ինձի.
Դուրս չի գնում, ներս չի մտնում,
Մօտ չի կանչում նա ինձի:

Մօտ չի կանչում. ես էլ մնում,
Չեմ յանդգնում մօտենամ.
Ու լուռ նայում, լոյս եմ խմում,
Դէմքի լոյսը հըմայուն...

Եւ ամեն օր մէջ գիշերին,
Լոյս է ծագում իմ շէմքին,
Լոյս է ծաղկում, յոյս է ցոլում,
Կոյս է կանգնում իմ շէմքին...

Արշաւիր Խոնդկարեան



Օ Ր Ա Գ Ի Ր

Դու յաճախ այստեղ կը նստէիր:

Ես, լուսնկային տակէն, կամաց կը մօտենայի պատուհանիդ ու կը դիտէի քեզ երկնք, երբ գլուխդ գրգռին հակած, մեղմիւ կը շարժէին շրթունքներդ...

Յետոյ, կը խանգարէի քեզ:

Դու կը բարկանայիր, կը վռնտէիր ինձ:

Լուսնկային տակ, երկնք կը թափառէի, սիրտս լեցուն շարունթիւնով ու քաղցրութիւնով...

Դու մեկնեցար...

Ու ես տխուր եմ:

Առաւօտուն երբ կարթննամ, կը խորհիմ թէ ինչո՞ւ բարձրանամ անկողնէս:

Այլ իմ ճամբան գեղեցիկ չէ, ալ չեմ նայիր երկնքի կապոյտին ու մոռացեր եմ ծաղիկներս համբուրել:

Առաւօտուն երբ կարթննամ՝ կը խորհիմ թէ ե՞րբ պիտի մթնէ այսօր, ե՞րբ պիտի մթնէ վաղը, միւս օր ալ, միւս օր ալ, Որ դուն վերագառնան...

Դու պիտի գնաս...

Ի՞նչ նւիրեմ անոր, որ իմ ազանջիս մրմնջեց այս հէքեաթալի բառերը...

Ես արբեցած եմ:

Ես կը նւիրեմ անոր արև՛ը, այն արևը՝ որ այնքան ջերմ, այնքան վաճ կը ծորի այսօր:

Ես կը նւիրեմ իմ ծաղիկներս, այն ծաղիկները, որ այս առաւօտ գուրգուրանքով համբուրեցի:

Իմ բոլոր աստղերը կը նւիրեմ ես անոր բոլոր աստղերս՝ քանի որ դու պիտի յայտնուի ինձի, իմ Աստղիկ...

Ես արբեցած եմ...

Ռաֆայէլ Չարդարեան

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

(ԽԳԻՆԻՍ)

Եփրեմ պապը շատ ծեր էր:


Վաղուց նրա աչքերը չէին տեսնում, ականջները ծանր էին լսում, իսկ գլուխը՝ շարունակ դողում էր հասած արևածաղկի պէս: Դողում էին և նրա սառը, չոր ձեռքերը. այնպէս որ երբ նա թանով ապուր էր ուտում կամ շորլա, կերակուրը միշտ կաթկթում էր նրա սպիտակ, մի քիչ էլ կանաչած միրքի վրայ:

Բացի այդ, Եփրեմ պապը չէր կարողանում երկար ման գալ, հեռու տեղ չէր գնում և միայն արև օրերին, երբ սիրտն ուզում էր զբօսնել տան առաջի պարտիզում, կանչում էր թոռան—Աստղիկին և նրա առաջնորդութեամբ, ձեռնափայտը ձեռին, կամաց-կամաց ման էր գալիս ծառերի տակ:

Յետոյ Եփրեմ պապի ատամներից շատերը թափւել էին, դրա համար էլ նա չէր կարողանում ուտել ոչ միս, ոչ էլ չոր հաց:

Այսպէս շատ ծեր էր Եփրեմ պապը: Տանը նրան այնքան էլ չէին սիրում և ամեն բան էլ չէին տալիս ուտելու: Բայց նա սիրում էր ամենքին... ամենից շատ սիրում էր փոքրիկ Աստղիկին. պատմում էր նրան հեքիաթներ, առակներ, պատմում էր Յիսուսի մասին, թագաւորների մասին և այն մասին, թէ ինչու են ընկնում աստղերը երկնքից: Երբեմն էլ կոպէկներ էր բախշում Աստղիկին, որ կանֆէտ առնի... Եւ դրա համար Աստղիկը պապին շատ էր սիրում. ամեն անգամ բռնում էր պապի ձեռքից և առաջն ընկած ման ածում ծառերի արանքում ու բացատրում, թէ որ ծառը որքան է բռնել և թէ ինչպէս է ծաղկել մասրի թուփը... Սակայն Աստղիկը շատ էր ափսոսում, որ պապը չի տեսնում այդ բոլորը. և որով-

2125-55



հետև պապը չէր տեսնում, Աստղիկը խղճում էր նրան և աւելի սիրում:

Մի բան սակայն դուր չէր գալիս Աստղիկին, որ պապը հիւանդանում էր շուտ-շուտ:

Այժմ էլ ահա երեք շաբաթ էր հիւանդ էր պապը: Երբ նա հագում էր, Աստղիկին թւում էր թէ չոր տերևներ են խշխշում նրա կրծքի տակ, իսկ քնած տեղը այնպէս էր խրոխրուացնում, որ ուր մէկը խեղդելիս լինէր նրան... Քանի որ էր պապը ուզում էր դուրս գալ զբօսնելու արևի տակ, բայց տատը չէր թողնում նրան. ասում էր որ կը մըսի... Եւ Աստղիկը զարմանում էր տատի վրայ, թէ ինչու է նա այդպէս անխիղճ մերժում պապին: Ինչ կայ որ, մտածում էր նա, թող պապը դուրս գայ, էլի տուն կը գայ... Բայց տատը և մայրիկը նրան չէին թողնում: Եւ քանի նրանք չէին թողնում, Եփրեմ պապը աւելի էր ցանկանում դուրս գալ...

Եւ ահա մի օր Եփրեմ պապը անսպասելի կերպով վեր կացաւ անկողնից: Աստղիկն այդ օրը շատ լաւ է յիշում:— Կիրակի էր. տատն ու մայրիկը գնացել էին ժամ, իսկ հայրիկը քաղաքումն էր: Երբ ինքը՝ Աստղիկը փողոցից եկաւ տուն, տեսաւ պապը նստել է անկողնում և ձեռքերով բան է փրնտրում իր կողքին:

— Ի՞նչ ես ուզում, պապի,— հարցրեց նա:

— Շորերս,— ասաց պապը դողալով:

Աստղիկը տւեց նրան կապան, չուխան, ոտնամանները և գդակը: Պապը դողդողալով հագնւեց և փայտը ձեռքին դուրս եկաւ պատշգամբ ու նստեց այնտեղ, չտախտի վրայ, արևի առջև:

Այդ օրը պապի դէմքը շատ տարօրինակ էր: Աստղիկը նայում էր նրան և զարմանում, թէ ինչու այդպէս մտամոլոր է պապը և ինչու է ահանջ դնում նա:

Իսկապէս Եփրեմ պապը ինչ որ բանի ահանջ էր դնում. գլուխը բարձր բռնած, աչքերը խուփ, նա կարծես ուզում էր լսել թէ ինչ է կատարւում գիւղում և գիւղից դուրս... Քանի ժամանակ էր նա դուրս չէր եկել տնից և դրա համար, խորը շունչ քաշելով, ուզում էր լսել դրսի կեանքը... Մի քանի տարւայ կուրուլթիւնը սրել էր նրա լսողութիւնը, ուստի և նա պարզ լսում էր մեղունների երգը օդի մէջ, բարդիների ճրք-

ճրքոցը և երեխաների աղմուկը մի հեռաւոր տան բակից: Նրա
ականջին էր հասնում և եկեղեցու տօնական զանգահարու-
թիւնը, որ կարծես թրթռում, խաղում էր օդի մէջ և շունչը
կտրած ընկնում գետին:

Զանգերի ղօղանջը Եփրեմ պապի հոգում զարթեցնում էր
անցած-մեռած յիշողութիւններ, և նա իրեն տեսնում էր երե-
խայ, որ Զատիին հօր հետ գնում էր եկեղեցի, ու զանգերը
ղօղանջում էին այդպէս հանգիստ ու միալար... Յետոյ նա
տեսնում էր իրան ջահել ու առողջ, որ, նոյնպէս ջահել մի
աղջկայ հետ, թև-թևի տւած պսակի է գնում ու զանգերն էլ
ղօղանջում էին այդպէս թրթռալով... Վերջապէս նա տեսնում
էր իրեն հասակն առած տղամարդ, որ գերանդին ձեռքին,
խոտ էր հնձում դաշտի մէջ... Զնգում էր գերանդին, լորերը
թռչում էին խոտի միջից, խոտը լաս-լաս դարսւում էր շարքով
և այսօրւայ պէս դարձեալ ղօղանջում էին ժամի զանգերը...

Այս բոլորը յիշելով, Եփրեմ պապը յանկարծ զգաց հնձած
խոտի հոտ և բերանը բանալով խորը շունչ քաշեց:

Աստղիկը, որ բոլոր ժամանակ նայում էր հիւանդ պապին,
զարմացաւ, երբ պապի դէմքը պայծառացաւ յանկարծ: Իսկ
նա—պապը նորից խորը, երկար շունչ քաշեց:

— Աստղիկ, — քիչ յետոյ ասած նա:

— Ի՞նչ է, պապի:

— Ինձ տար բաղը:

— Բա որ մըսես, պապի, — ասաց Աստղիկը, տարակու-
սանքով նայելով պապի կոյր աչքերին:

— Զեմ մըսի, աղջիկս, գնանք, — ասաց պապը:

Եւ պապ ու թոռ ձեռք-ձեռքի տւած մտան պարտէզ:
Ծերունին ձեռը տւած թոռան, քայլում էր նրա ետևից և
հարցնում նրան, թէ ի՞նչպէս են ծառերը, բոլորն էլ ծաղկել
են. ծաղիկները թափւել են թէ ոչ:

— Թափւել են, պապի, թափւել են, — ասում էր Աստղիկը:

— Պտուղներ երևո՞ւմ են ծառերի վրայ:

— Այո, պապի, շատ...

— Էդ լաւ է, — ասում էր պապը, — էդ լաւ է:

Այսպէս իրար հետ խօսելով, նրանք հասան փոքրիկ պար-
տէզի ծայրը, որտեղից դուռ էր բացւում փողոցի վրայ: Պապը
այդտեղ կանգ առաւ և նորից շունչ քաշեց:

— Գնանք տուն, պապի,—ասում էր Աստղիկը. —կը մըսես, տատը կը բարկանայ...

— Չէ, բալիկս, չեմ մըսի,—հանգստացնում էր պապը և շունչ քաշում:

Մի փոքր այսպէս կանգնելուց յետոյ պապը հարցրեց:

— Հանդը այստեղից մօտիկ է, չէ՞, Աստղիկ:

— Հա, պապի, ի հարկէ, մօտիկ է:

— Դէ որ մօտիկ է, աղջիկս,—ասաց պապը,—ինձ տար հանդը. դու էլ քեզ համար ծաղիկ կը քաղես:

Աստղիկն ուրախացաւ.

— Հա՛, պապի. էնքան ծաղիկ կայ հանդում...

Մի քանի րոպէ անց արդէն գիւղացիները զարմանքով տեսան իրենց դռներից, թէ ինչպէս հիւանդ եփրեմ պապը թոռան ձեռքից բռնած գնում էր դէպի դաշտը: Նրանք գնում էին դաշտ և մոռացել էին, որ տանը մարդ չկայ և դռները բաց են հաւերի ու մուրացկանների առջև...

Փոքր յետոյ նրանք դուրս եկան դաշտը և երկար ժամանակ գնում էին խոտերի միջով: Պապը քայլում էր կռացած և հետում էր ամեն մի քայլն անելիս, բայց կարծես չէր յոգնում. իսկ Աստղիկը պապի ձեռքը բռնած առաջնորդում էր նրան և շարունակ խօսում. «պապի, դէսն արի», «պապի, առաջիդ քար կայ», «պապի, լօք տո՛ւր»... Եւ ծեր պապը հնազանդ իր թոռան ձայնին, կատարում էր նրա բոլոր պահանջները. լօք էր տալիս ջրի վրայից, թեքւում էր այն կողմը, ուր քաշում էր իրեն փոքրիկ աղջիկը:

Բաւական տեղ գնալով, պապը կանգնեց, շունչ քաշեց բերանով և հարցրեց Աստղիկին, թէ ինչ տեղ են գտնւում իրենք:

— Լաւ տեղ ենք, պապի,—պատասխանեց Աստղիկը.— էնքան ծաղիկ կայ...

Պապը շունչ քաշեց դարձեալ և հարցրեց.

— Անտառը մօտիկ է հա՛, Աստղիկ:

— Հա՛, պապի, հրէս մօտիկ: Դու տեսնում ես որ...

Պապը առանց պատասխանելու, կոյր աչքերը բարձրացրեց և ականջ դրեց: Այս անգամ նա ուզում էր լսել անտառի ձայնը: Եւ ահա պարզ նրա ականջին էր հասնում հինաւուրց անտառի խշշոցը, որ նմանում էր գետի շառաչիւնի: Անտառը

խշշում էր այնպէս, կարծես բոլոր ծառերը միասին երգ էին ասում: Ի՞նչ լաւ է խշշում անտառը, մտածեց պապը: Այդ խշշոցը նոյնն էր, ինչ-որ շատ-շատ տարիներ առաջ: Այդպէս էր խշշում նա, երբ ինքը երիտասարդ էր. այդպէս էր խշշում մերին, երբ նա հասակն առած տղամարդ էր... Այդ խշշոցը նոյնն է, առաջւանը, նոյնը կըլինի և միշտ...

Ու ծեր Եփրեմ պապը տխուր հառաչանքով նստեց կահնակների վրայ հա՛ գստանալու, իսկ Աստղիկը սկսեց ծաղիկներ քաղել և վազել թիթեռների ետևից:

Նստած տեղը, բոլոր ժամանակ, Եփրեմ պապը շարունակում էր ականջ դնել:

Այժմ, անտառի խշշոցի հետ նրա ականջին էր հասնում առւի քշքշոց... Նա ճանաչում էր այդ առու. հնձի ժամանակ քանի անգամ էր հաց կերել նրա մօտ... Առւի քշքշոցի հետ Եփրեմ պապի ականջին էին հասնում և թռչունների երգը, — այդ արտոյտներն էին երգում, — և խոտերի շրշիւնը, և հովից օրօրւող թփերի շշուճը, իսկ հեռւից գալիս էր դարձեալ եկեղեցու զանգերի ձայնը ու խառնւում անտառի խշշոցի հետ:

Ի՞նչ լաւ է խշշում անտառը...

Այսպէս էր մտածում պապն իր սրտի խորքում, և նրա շրթունքները դողում էին յուզմունքից, նա ուզում էր աղօթել, բայց միտքը աղօթքի խօսքեր չէին գալիս... Մի փոքր էլ այդպէս ականջ դնելով այդ ծանօթ, հարազատ ձայներին, ծեր պապը յանկարծ կռացաւ և գլուխը խոնարհեց գետին...

Երկար նա համբուրում էր կանաչով ծածկւած հողը, և արցունքներն առատօրէն վազում էին նրա աչքերից... Մի փոքր էլ, մի փոքր էլ, և նա ուժասպառ ընկաւ կանաչների վրայ...

Քիչ յետոյ, երբ Աստղիկը ծաղիկները գրկած վերադարձաւ պապի մօտ, նա զարմացաւ տեսնելով պապին պառկած: «Պապը ինչու է քնել էսպէս», — մտածեց նա և ձայն տւեց: Բայց պապը նրան չպատասխանեց:

Այդ ժամանակ Աստղիկն աւելի մօտեցաւ նրան և շարժեց նրա ձեռքը.

— Պապի, այ պապի, — կրկնում էր նա ձեռքը քսելով պապի երեսին, գլխին. — վեր կաց գնանք... Դէհ, պապի, վեր կաց, տատը կը բարկանայ...

Պապը դարձեալ չէր գարթնում: Իսկ Աստղիկը շարունակում էր շարժել նրա ձեռքը, գլուխը, աղերսում էր նրան, որ գարթնի, բայց նա ժաժ չէր գալի... Այդ տեսնելով, վերջապէս, Աստղիկը որոշեց և վազեց տուն, յայտնելու, որ պապը քնել է դաշտում ու չի գարթնում...

Բայց պապը չէր քնել... Գնացին տեսան պապը մեռել էր դաշտում:

Երբ Աստղիկն իմացաւ այդ, նա չէր հաւատում, որ պապը մեռած լինի. չէր հաւատում և նրան, որ պապին կը տանեն իրենց տնից և նա էլ ետ չի գայ: «Հապա էլ ո՞վ կը պառկի նրա անկողնում,—մտածում էր նա,—ով կը հագնի նրա շուխան...»

Եւ երբ միւս օրը տէրտէրները պապին տարան ժամ, Աստղիկը սպասում էր, որ պապը կը վերադառնայ. բայց մութն էլ ընկաւ, նա չեկաւ ժամից... Իսկ երբ տան դռները փակեցին, որ քնեն, Աստղիկը սաստիկ տխրեց ու լաց եղաւ վերմակի տակ:

Նա լաց էր լինում ու մտածում, թէ ինչու տան դռները փակեցին. չէ որ պապը կարող է գալ. գուցէ հենց հիմա էլ եկել ու կանգնել է դրան առաջին...

Լաց լինելով, նա մտածում էր, թէ ո՞վ պէտք է այնտեղ ման ածի պապին. չէ որ նա կոյր է, չի տեսնում, կարող է բարի դէմ առնել կամ ոտը ջուրը քցել...

Ա՛խ, տեսնես կը լինի մէկը,—մտածում էր Աստղիկը,—մի բարի տղայ կամ մի բարի աղջիկ, որ այնտեղ ման ածի խեղճ պապին...



*
* *

Կոյր է քո հոգին, միթէ յաւիտեան
Պիտի մորմոքեմ ու մնամ կարօտ,
Այս անդարձ կեանքում մինչև գերեզման
Չգրկեմ քեզ խենթ, չլինեմ քեզ մօտ...

Դու նայում ես մեզմ, ժպտում տխրադէմ
Ասես անցեալդ անվերջ ափսոսում
Սրտիդ խորհուրդը, ան, ես չգիտեմ.
Իմ սրտում սիրոյ յոյգերն են խօսում:

Կը պատուեմ մի օր դիմակըս այրող,
Կը կանգնեմ հպարտ քո ճամբի վրայ,
Դու կըզգաս գաղտնի հաճոյքի մի դո՛ղ,
Վարանոտ հոգիդ էլ չի երերայ:


Ա Չ Ե Ր Ի Դ

Խենթ տղայ, քո խոհուն ու ժպտուն՝
Քո հպարտ աչերում կենավառ,
Դիւային աչերիդ անդնդում
Դեգերում է հոգիս անվազար:

Կայծակներ են պայթում դէմ ի դէմ,
Թէ արևն է այրում արեին.
Ես ոչինչ, էլ ոչինչ չըզիտեմ,
Էլ արևը չունի այգը հին:

Ես արբած եմ, խելառ քո խոհուն,
Արևոտ հմայքով աչերիդ.
Միշտ այդպէս ժպտա՛ ինձ, իմ հոգուն.
Իմ հոգում փոփր այգն օրերիդ:

Արմենուհի Տիգրանեան



* * *

Ինձ մի մօտեցիր, թող հեռւից-հեռու ես քեզնով արբեմ,
Քո բիւրեղ հոգին հեռւից գուրգուրեմ, հեռւից փայփայեմ.
Քո չքնաղ լեզւով ծաղիկները միշտ թող ինձ հետ խօսեն,
Քո աչքերի տեղ՝ թող աստղերը վառ ժպտան մեղմօրէն...
Քո ջերմ շուրթերով. քնքուշ զեփիւնը թող ասի օրօր,
Կարօտից հիւժւած, տանջւած իմ սրտին բերի նուրբ անդորր.
Ինձ մի մօտեցիր, կրկին կը վառւի աշխարհը հոգուս,
Աշխարհը սիրոյս, որ մի օր ունէր ոսկի արշալոյս...
Ինձ մի մօտեցիր, օ, մի մօտեցիր, թէ չէ կը խամրեմ,
Թող հեռւից միայն միշտ քեզնով արբեմ, քո երգը հիւսեմ...
Վարսենիկ Աղասեան

Ս Օ Ն Է Տ

Յիշում եմ ես ձեզ... Գիշեր էր, գարուն.
Բուրում էր թովիչ ափը Արագի.
Ձեր մանդոլինը հնչում էր սիրուն
Նւագում էիք — «Սպիտակ ցարասի»:

Տխրում է քաղաքը՝ աշնան մաղձի տակ,
Հոգիս գրկել է մի յոգնած թախիժ.
Ես չեմ մոռացել ցարասին սպիտակ,
Ձեր մանդոլինը հնչում է նորից...

Սկամաղձ քամին, շնչում է հնչեղ
Նայում է արտը համր, դալկադէմ.
Ու ես չեմ տխրում, որ ցուրտ է այստեղ,
Որ չորացել են յասմիկ ու անթեմ.
— Ես յիշում եմ ձեզ... Արագը ձայնեղ,
Ձեր գունաս դէմքը մանդոլինի դէմ:

Ն. Աֆրիկեան



ԸՆԿԵՐՈՋՍ ՕՐԱԳՐԻՑ

31/xii. 1914

Վաղևայ առթիւ Վարդին ուղարկեցի այցեւորմաս, վրան գրեաժ.

«Նոր Տարուն, նոր գարուն Ձեզ...»

1/i. 1915

«Այսօր, երբ ձիւնապատ լեռներում ու ձորերում մարդուն դաժան գերանդու պէս գնդակն է հնձում՝ Նոր Տարի է:

Անցեալ օրը երբ բաժանւում էի ամիսներ առաջ ընկերական խնճոյքում ծանօթացած օրիորդ Հեղինէից, ասաց:

— Կը գաս չէ՞, Նոր Տարուն:

Ճիշտն ասած «շնորհաւորանք» ման գալուց զգւում եմ, ուստի տւի անորոշ պատասխան.

— Տեսնենք, գուցէ...

Երբ նրա դէմքը դժգոհ արտայայտութիւն ստացաւ, աւելացրի.

-- Լաւ. երեկոյեան միայն:

Նա ուրախացաւ:

Երբ սեղմեցի Հեղինէի ձեռքը՝ դողում էր, իսկ խօսակցութեան ընթացքում մերթ սպրդնում, մերթ կարմրում էր նրա ձեռքը, որին գեղեցկութիւն տւողը գունատ այտի սև խալն էր:

Երբ բաւական հեռացել էի նրանց դռնից, ետ նայեցի:

Հեղինէն աջ ոտքը դրել էր դարպասի շէմքին, ձախ ձեռքը աջ արմունկի տակ և ծնօտն առել ձեռքի մէջ ու խորասուզւած նայում էր իմ ուղղութեամբ: Նա տեսաւ ինձ, բայց չչարժեց:

Չէ որ նա հենց այդ էր ցանկանում, չէ որ «սիրում եմ քեզ»-ը միշտ նրա լեզվի ծայրին էր, չէ որ նա շատ անգամ էր որոշել ինձ հանդիպելուն պէս ասէր այդ: Բայց երբ պատահել է ինձ լեզուն անգորացել է այնպէս, ինչպէս ելէքտրական լոյսը արևի ճառագայթների հանդէպ:

Անթիւ անգամ է նա ինձ դիմել՝ «շատ բան ունեմ քեզ ասելու...»: Երբ հետաքրքրւել եմ, նա լռել է կամ հոգոց քաշել ու խեղճ հայեացքը յառել ինձ՝ կարեկցանքի արտայայտութեամբ:

Այո, նրա լռութեան մէջ տանջանքը նկատել եմ, նրան հասկացել. հասկացել եմ և այն, որ նա շատ անկեղծ է դէպի ինձ, որ իրեն համար ամեն լաւ իմ մէջ է գտնում, բայց անհասկանալու եմ տւել, անտարբեր ձևացել...

Թարմ է դեռ յիշողութեանս մէջ և այն, որ մի օր նրա ընկերուհին ինձ ասաց.

«Հեղինէի տեսքին ժպիտ կամ ծիծաղ երևում է միայն ձեզ հետ եղած ժամանակ»:

Չեմ մոռանում և այն, որ գրօսանքից վերադառնալիս, երբ մօտենում էինք իրենց տանը, նա սկսում էր շատ տանջւած, մտախոհ ու դանդաղ քայլել...

Ի հարկէ Հեղինէն չէր ուզում, որ այդպէս շուտ բաժանւենք: Մի քանի բոպէ առաջ կատակող ու լիակուրծք ծիծաղող և չարածճիւղութիւն անող աշակերտուհուն պատում էր սիրտ մաշող մելանխոլիա...

Նրա մէջ այդ տանջանքն էր, որ սիրում էի. նրա մէջ զգում էի այն հաճոյքը, ինչ ես Վարդին էի տալիս...

*
* *

Մտածել ու գտել էի թէ ինչով պիտի շնորհրաւորէի Հեղինէին Նոր Տարին:

Այժմեան օրիորդներից շատերի պէս նա էլ բանաստեղծուհի դառնալու հակումն ունէր. նա էլ ոտանաւորներ էր գրում: Այդ պատճառով էլ գնեցի մի ավբօմ և վրան գրեցի. «օր. Հեղինէին»:

Անհամբեր սպասում էի երեկոյին, բայց օրն ասես երկարում էր. թւում էր թէ չէ մթնելու այսօր...

Ուզեցի ցերեկն սպանել և դրա համար էլ աննպատակ էքսկուրսիա կատարեցի քաղաքից դուրս:

Արդէն հատ ու կենտ վառուժ էին ելէքտրական լամպաները, որ շատ նման էր աստղերի երևալուն:

Մութն սկսում էր թանձրանալ, երբ որոշեցի վերադառնալ քաղաք:

Սարի կիսուժն էի, որ քաղաքը գտնւում էր հրավառութեան մէջ:

Աստղերի նման պէծին էին տալիս լապտերները և մարդու դէպ իրենց ձգում այնպէս, ինչպէս մարդը տենչում է է դէպի աստղերը, եթերը...

Երբ ներս մտայ քաղցրաւէնի անուշ անող հիւրերի շատութիւնը մի պահ շփոթեցրեց ինձ. բայց չմոռացայ պարտականութիւնս:

Բոլորի ձեռքն էլ թօթեցի, բացի Հեղինէինը, որն ուրախութիւնից աննպատակ միւս սենեակն էր մտնում ու դուրս գալ'ս:

— Ծանօթացէք, խնդրեմ, — Հեղինէն դիմեց պատին կպցրած նկարներին հետաքրքրութեամբ նայող բարձրահասակ երիտասարդին, որին առաջին անգամն էի հանդիպում:

— Նկարիչ Փան, իսկականը՝ Յովհաննէս Մուրադեան, — ոտներն իրար մօտեցնելով ու խոնարհելով ձեռք տւեց նա և էլի ուշադրութիւնը դարձրեց նկարներին:

Երբ ուզում էի Հեղինէի քրոջ, տիկին Սիրանոյշի առաջարկած աթոռին նստել, մօտեցաւ Հեղինէն և տարօրինակ ժպիտը դէմք'ն, ուղղակի աչքերիս մէջ նայելով ասաց.

— Ինձ էլ բարևիր:

Անխօս սեղմեցի օրիորդի ձեռքը և ասացի, որ վերարկուիս գրպանում իրեն համար նւէր կայ:

Նա շտապեց միւս սենեակ:

Խորէնը, տիկին Սիրանոյշի ամուսինը իմ խնդրանօք ջութակ նւագեց:

Նկարիչը, որ տեղաւորւել էր կողքիս, դիմեց ինձ.

— Ո՞ւմ հետ բախտ ունեցայ ծանօթանալու:

Տւի անուն, ազգանունս:

Խօսել չեմ սիրում երբ նւագում են, երբ զգալ ու ապրել է հարկաւոր, այդ իսկ պատճառով տեղիք չտւի:

Այդօր Խորէնը շատ ոգևորւած էր նւագում և հայեացքը մեզնից չէր հեռացնում:

Մէկ էլ ինչ որ տեղ գնալու նպատակով Հեղինէն վերարկուն հագած եկաւ, երկուսիս մէջ տեղ կանգնեց: Խորէնը դեռ նւագում էր մազոտ գէմքն ու խոշոր, սև, նրա միակ գեղեցկութիւնը կազմող աչքերը չը հեռացնելով մեզնից: Օրիորդը դիմեց նրան.

— Համեմատութեան դիր ինքդ...

Փեսան հայեացքը նրան ուղղած ժպտաց ու նորից նայեց ինձ, ապա նկարչին, որը թւաց թէ ոչինչ չհասկացաւ, այլ թերթերունքներով ծածկւած աչքերը մի կէտի յառած, ասես խորհում էր:

— Շո՛ւտ կը գաս,— լաւեց տիկին Սիրանոյշի դուրեկան ձայնը, երբ Հեղինէն ուզում էր դուրս գնալ:

— Չգիտեմ, գուցէ շատ ուշանամ. կարող է պատահել, որ այնտեղ էլ գիշերեմ,— պատասխանեց նա և գնաց:

Խեղճ Հեղինէ, դեռ կարծում է, որ ես իրենն եմ...

«Համեմատութեան դիր» ը այնքան վատ ազգեց ինձ վրայ, որ համակրանքին տեղի տւեց հակակրանքը և Հեղինէն մի պահ նսեմացաւ աչքիս...

Մի աննկատելի ծանրութիւն ինձ ճնշեց, երբ շուկայում լինելս զգացի...

Նրանց փեսացու ընտրելու տգեղ ձևը տանջել սկսեց ինձ և յանցաւոր զգացի ես իմ առջև, որ այցելում եմ նրանց տուն:

Այո՛, լաւ աղջիկ է Հեղինէն և ես յարգում ու մտերիմ յարաբերութեան մէջ եմ, բայց մեր զրոյցը չէ անցնում գրականութիւնից բացի այլ խնդիրների շուրջը, իսկ այդ չէ նշանակում թէ սիրում եմ նրան:

Կէս ժամ չէր անցել և զրոյցի տաք ժամանակն էր, որ վերադարձաւ Հեղինէն ընկերուհու հետ:

Մեկուսացայ. խօսում էի հատ ու կենտ անօրոշ, աննպատակ:

Ըստ երևոյթին այս նկատեց Հեղինէն և սովորականի պէս հարցրեց.

— Չե՞ս ծխի:

Նա գիտէր, որ ես ծխող չեմ, բայց սիրում էր պապիրոսս վառել՝ սիրում էր, որ ես ծխում էի:

Չմերժեցի: Երբ սեղանին եղած պապիրոսից դրի բերանս,
լուցկին ձեռքին նորից կանգնած էր ինձ մօտ: Եւ նա վառեց:

Հեղինէն անցաւ դիմացս, կանգնեց Խորէնի մօտ և խիստ
ուշադրութեամբ, աչքերով հետևել սկսեց բերանիցս թողած
ծխին՝ մինչև նրա օդի մէջ ձուլուելը:

Այդ նկատելով հայեացքս դարձրի այլ կողմ, բայց նա
չդադարեց ինձ նայելուց և ինչպէս ցանկանում էր թէկուզ մի
ակնարկ խլելու ինձնից...

Խէնթ Հեղինէ...

Նայեց նայեց և խոր հոգոց քաշեց, որ նկատելի կերպով
բարձրացաւ ու իջաւ նրա փարթամացող կուրծքը:

Երբ դարձայ նկարչի կողմը, նա ծոցից մատիտն էր հա-
նում, խօսակցին ինչ որ ցոյց տալու նպատակով:

Իրօք նկարչի տպաւորութիւն ստացայ այն ժամանակ,
երբ նկատեցի գունաւոր ու գորշ տուժուրկայի ներկի բծերը:

— Պարոն ժսն, չվերջացրիք ձեր, այսպէս ասած, ձանձ-
րալի խօսակցութիւնը, — հարցրեց Հեղինէն:

Նկարչի մանրիկ աչքերը դարձեալ կորան երկար թերթե-
րունքների մէջ, ասես նկարչօրէն պատկերի դիտելիս լինէր և
վիզը երկարեց, բոլորովին սափրած, նեղ ու երկար դէմքը
առաջ ցցեց ու խիստ կոկէտ, իրեն յատուկ պաղ տոնով դիմեց
Հեղինէին.

— Օրիորդ, միթէ ձեզ համար ձանձրալի է նկարչութեան
մասին խօսելը...

Ասաց, ետ քաշուեց և ժպտաց, ճակատի կնճեռները ցրուեցին:

— Երբ խօսակցութիւնն ընդհանուր չէ, ի հարկէ ձանձ-
րալի է, — արագ-արագ ու կէս կատակով պատասխանեց Հեղինէն:

— Օ՛, ո՛չ, օրիորդ, պատասխանեց նկարիչը նոյն հա-
տու, շեշտակի ու դանդաղ տոնով, այս անգամ աչքերը արագ
թերթելով, — առհասարակ արւեստիս մասին խօսելուց ես չեմ
ձանձրանում. լաւ արւեստագէտի համար իր արւեստի մասին
խօսելը հոգեկան մեծ հաճոյք է, բայց երբ օրիորդը չէ ցանկա-
նում լսել մեզ, ես դիջում եմ, — ձեռքը թափ տուեց և լայն ու
հաստ շրթուները ետ տարաւ, վերստին փայլեց նրա ոսկէ
ատամը, իսկ վերջին բառերն աւելի բարձր ու շեշտակի ար-
տասանեց

Պատասխանից յետոյ նրա դէմքով գոհ ժպիտն էր խաղում:

— Գիտէ՞ք ինչ, — Հեղինէն ծափ տալով դիմեց բոլորին, — եկէ՛ք մի բան խաղանք:

— Համաձայն եմ, — գլուխը շարժելով ու ժպտերես պատասխանեց նկարիչը:

— Մենք էլ ենք համաձայն, — վրայ բերին միւսները: Հեղինէն մօտեցաւ ինձ ու հարցրեց.

— Համաձայն ես:

— Կը խաղամ, — պատասխանեցի առանց երեսին նայելու: Խաղի անունն էր «Ֆանտ»:

Զգիտեցողներին բացատրում էր Հեղինէն:

Տւի դանակս, որով մի անգամ դիտմամբ մատը կտրեց Հեղինէն:

Նկարիչն էլ տւեց կրծքի վրայ փայլող, ժամացոյցի շղթայից կախուած քնարածն ժետոնը:

Միւսներն էլ տւին մի-մի իր:

Խմբեցինք սենեակի ազատ տեղը: Խաղն սկսեց: Բոլորն էլ նստած էին բացի Հեղինէից, որ կանգնել էր կենտրոնում:

— Ի՞նչ անի սրա տէրը, — բռունցքը ամուր սեղմած ու վեր բարձրացրած հարցրեց Հեղինէն:

— Երգի, — լսեց մէկի ձայնը:

— Երգի, երգի, — համաձայնեցին միւսները:

Բացեց բռունցքը: Դանակս էր:

— Իսկ սրա տէրը:

— Կամուրջ դառնայ:

— Չէ. ուրիշ բան, — ոտքը յատակին խփելով պատասխանեց Հեղինէն:

— Զոռն, — ոգևորւած վրայ բերեց Խորէնն ու ծիծաղեց:

Տւինք մեր համաձայնութիւնը:

Ժետոնն էր:

— Պայմանով, որ ում ինչ վիճակի ճշտութեամբ կատարի. — բարկացած բայց զուսպ տոնով պնդեց նկարիչը:

— Այո՛, ս՛յո՛, — համաձայնեցինք մենք:

— Սրան ես կառաջարկեմ, — ասաց Հեղինէն:

Թէև խաղում չէ թոյլատրւում, որ մայրն առաջարկութիւն անի, բայց նկարչի առաջարկութեամբ զիջեցինք:

— Սրա տէրը՝ վարդ դառնայ:

Աղջկայ բարակ մատանի էր, մարգարտէ ակով:

— Ի՞նչ է, -- ուրախացած բացականչեց Հեղինէն:

Եւ այսպէս շարունակեց խաղը մինչև առաջին գործողութեան վերջանալը:

Երկրորդ գործողութեամբ ում ինչ վիճակել էր պէտք էր կատարել:

— Մի առաջարկութիւն, -- դիմեցի խաղակիցներիս, նախքան իմ երգելը:

— Խնդրեմ, -- բարձրաձայն ու վառուղ դէմքով պատասխանեց Հեղինէն, որին հետևեցին միւսները:

Հեղինէն սպասողական հայեացքն ինձ ուղղած լուռ նայում էր շրթունքներին:

— Որպէսզի երգելովս տհաճութիւն չպատճառեմ ձեզ հետև ինձ, առաջարկում եմ օրիորդ Աստղիկի և իմ պարտականութիւնների միջև փոփոխութիւն մտցնել. այսինքն նա կերգէ, իսկ ես կարտասանեմ մի բանաստեղծութիւն:

— Բրաւօ, համաձայն ենք, -- բոլորի կողմից շտապեց պատասխանել Հեղինէն:

Օրիորդ Աստղիկը շմերժեց մեզ համար երգել «Անուշ»-ից, որին խորին լուսթեամբ ամենքն ունկնդրեցին:

Հերթը նկարչինն էր:

Մի փոքր տատանւեց ու կանգնեց:

— Եթէ ձեր զուոցով մեզ գեղարւեստական հաճոյք չէք պատճառելու, այն ժամանակ փոխարինեցէք մի ուրիշ բանով, -- առաջարկեցի նկարչին:

— Կաշխատեմ այդ հաճոյքը տալ ձեզ, -- ուղղակի ինձ պատասխանեց նա:

Եւ ինքնասիրութիւնը գրգուածի պէս մի քանի «սրախօսութիւններ» անելուց յետոյ սկսեց զուսալ երեք ընդմիջումով, ամեն կերպ աշխատելով իր բաս ու չոր ձայնը նմանեցնել իշի սոսրած օյին...

Քրքիչը ողջ սենեակն էր բռնել: Խորէնի դէմքը դժգոհ արտայայտութիւն էր ստացել... Մտերիմ ընկերը բոլորի ծիծաղի առարկան էր դարձել...

— Ընչ, պարոններ, քննադատութիւնը բացակայում է, -- լրջօրէն խօսեց նկարիչը և աւելացրեց.

-- Պէտք է իւրաքանչիւրի արածը գնահատել ըստ արժանոյն:

— Այո, ճիշտ էք ասում, -- պատասխանեցի և աւելացրի ես:

— Դո՛ւք, պարոն ժան, շատ լաւ գոռացիք...

Հեղինէն այնպէս կուշտ ծիծաղեց, որ ալ-լալայ դարձաւ, իսկ Խորէնը լուռ էր ու մտազբաղ...

— Ես վարդ լինեմ ի՞նչ կանէք, — ամենից առաջ նկարչին դիմեց Հիղինէն:

— Թերթիկները կը պոկեմ քամուն կը տամ, որ յաւիտեան թարմ սաւառնէք բնութեան մէջ:

Ոմանք ասացին, որ կը ծքին կը կպցնեն, ոմանք թէ հոտ կը քաշեն և վերջն էլ դիմեց ինձ, որ պատասխանեցի սառնօրէն.

— Կը դնեմ գրքի մէջ և կը պահեմ...

— Իսկ ես. ասեմ, — մի փոքր մտածեց ու շարունակեց, — ես կը դնեմ բաժակի մէջ և բոյրը կը վայելեմ, երբ թառամի, վերջին ասողի պէս գրքում կը պահեմ...

Երանի թէ Վարդն էլ տեսչար Հեղինէի պէս... Երանի թէ Հեղինէին կարողանայի սիրել այն պէս, ինչպէս Վարդին...

«Փանտ»-ը Հեղինէի ցանկութեամբ փոխարինւեց ուրիշ խաղով. ես չմասնակցեցի, Հեղինէի ոգևորութիւնն էլ նւագել սկսեց, երբ խաղը վերջացաւ պատին կախած ժամացոյցը տասր զարկեց:

Նկարիչը պատրաստուեց գնալու:

Հեղինէն մօտեցաւ և հարցրեց նրա արւեստ սնոցի տեղը:

Նկարիչը տուեց հասցէն

Հեղինէն նայեց ինձ ու դիմեց նրան.

— Կարելի է ձեր աշխատութիւնները տեսնել:

— Խնդրեմ: Երբ կամենաք, — պատասխանեց նկարիչն ու շտապեց աւելացնել.

— Լաւ կը լինի, եթէ կիրակի օրը գաք. ես մի գործ եմ սկսելու, որի պրօեկտն այդօր պատրաստ կը լինի:

— Կիրակի ճաշից յետոյ, որ ժամին յարմար կը լինի ձեզ համար:

— Կարող էք գալ չորսի ժամանակ:

Ժամադրւելուց յետոյ օրիորդը դիմեց Խորէնին.

— Դու էլ կը գա՞ չէ՞...

Նա իսկոյն համաձայնեց:

Հեղինէին նայելիս այն տպաւորութիւնն էի ստանում, որ կարծես ասում լինէր. «Տես...»:

Տանեցի՞ երին հրաժեշտ տալիս նկարիչ ժանը կրկնում էր. «Զգացւած եմ...»:

Վերջն էլ կանգնեց դրան մօտ, մարմինը մի փոքր խոնարհեց, շրթունքները հպեց և ասաց. «Յտեսութիւն...»:

Նա լայնեզր գլխարկը ծածկեց. որ շատ էր սազական լայն, կարճ և կիսամաշ վերարկուին ու դուրս գնաց. նրան ուղեկցեց Խորէնը: Հեղինէն դուրս չգնաց:

Երբ նա վերադարձաւ, օրիորդը մի խաղ ևս առաջարկեց. Նորից մասնակցել չցանկացայ և ուշ լինելու պատճառով պատրաստեցի տուն վերադառնալ:

Հեղինէն տխրեց սովորականի պէս և էլի մտքերի ծովն ընկաւ:

Ոտքի ելայ թէ չէ, նա կամաց-կամաց մտաւ միւս սենեակ և բերեց գլխարկս ու վերարկուս:

Մինչև փողոց ինձ ուղեկցեցին տիկին Սիրանոյշն ու Հեղինէն:

Երբ տիկնոջ սիրալի վերաբերմունքի համար շնորհակալութիւնս յայտնեցի և Հեղինէի յուզմունքից դողացող ձեռքը սեղմեցի, տիկին Սիրանոյշն աւելացրեց.

— Շնորհ, շնորհ յաճախեցէք: Շատ ուշ-ուշ էք գալիս մեզ մօտ: Խօստացայ և բաժանեցի:

Եթէ սիրւելու հաճոյքն ստանալու ցանկութիւնն ինձ չյաղթէ, վճռեցի այլևս չայցելել օրիորդ Հեղինէին...

6/1. 1915

Այսօր Վարդից ստացայ մի բացիկ, որ Քրիստոսի Ծնունդը շնորհաւորելուց յետոյ գրել էր. «Սրտանց ցանկանում եմ ձեր գարուն կեանքին ծաղիկ օրեր, յուսալի և երջանիկ ժամեր...»

Կաւն է, շատ լաւ:

Ուրեմն յուսամ դեռ...

Բիւր անգամ կարդացի բացիկն ու պատին կպցրի. գեղեցիկ պէյզաժ էր, գարնան տեսարան, վարդառատ մի տեղ:

Անգին Վարդ,

Յուսահատութեան շէմքին գտնւող սիրտս նորից բռնկւեց. նորից զգացի քո բոյրն իմ սենեակում. նորից քեզ տեսնելու կարօտն ինձ պատեց...

Մ. ԷՓԵՆԿ

ԱՆՄԱՀԱԿԱՆ ԵՐԳԸ

Ոչինչ չկայ գերող, գիւթող ինձ այնպէս,
Ինչ տաճարի անմահական երգն յստակ՝
Խորշակա՛ոյց ձեղունների ու վէս-վէս
Գմբէթների, կամարների շուքի տակ:

Յաւերժական պատարագի թրթրուուն
Ու ցաւահեղձ, զուսպ հեկեկոցն եմ սիրում,
Անմահների խուլ մրմունջը տաճարում,
Որ մեղմօրէն երերում է, մարմրում...

Թող չլինի երկիրը բիւր մարդկանցով՝
Քէնն ու կիրքը, պազշտ սէրը սրտերում.
Ու լոկ ապրեն հոգիները՝ լոյսի ծով,
Թող չլինի ոչ կեանք, ոչ մահ աշխարհում:

Եւ յաւիտեան աղօթք՝ անբիծ՝ թող փարի
Գմբէթներին, կամարներին տաճարի...
Ոչինչ չկայ գերող, գիւթող ինձ այնպէս,
Ինչ խնկարոյր, անմահական երգը վէս:

Պահարէ

Հ Ա Շ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ասացէք թող գահ ու թոյլ ձեռներով իմ գուռը բանա.
Յոգնած կը լինի, այլայլւած, բեկւած. թող ինձ մօտենա,
Արև աչերը տխրութեամբ առած՝ երկար ինձ նայի,
Անցած մեր սիրոյ՝ կեանք երազներից ինձ քաղցր պատմէ:

Նա գիտէր հոգուս տառապանքը մութ, կսկիծը անհուն,
Չարքաչ իմ կեանքի այնքան դառնութիւն, տաղտկութիւն ու թոյն.
Ասացէք թող գահ, հիւանդ եմ հիմա՝ աչերին կարօտ,
Ասացէք՝ դառն կսկիծ է իջնում իմ հոգուն աղօտ...

Մեծատունեան

ՍՏԵՓԱՆ ՄԵԼԻՔԵԱՆ

Պարոն Ստեփանը, երբ երեկոյեան մտաւ դեռ չլուսաւոր-
ւած սեղանատունը, դիմեց իր դեռատի կնոջը.

— Ի՞նչ եղաւ շան դիակը:

— Դռնապանը Քուռը նետեց:

Կնոջ պատասխանից յետոյ մտաւ «ռանձնասենեակ, նըս-
տեց գրասեղանի առջև և սկսեց կարդալ այդօր ստացած ու-
սերէն ամսագրի գիտական բաժինը՝ մինչև թէյի պատրաստելը:

Նախ քան ամսագրի ստանալը, նա կարդացել էր գրքի
բովանդակութիւնը լրագրներում և աճապարող հետաքրքրու-
թեամբ սպասում պոստին:

Իայց այժմ, երբ ամսագիրն ա ջնն էր և մինչև իսկ կար-
դում, շարունակ մտքի մէջ պտտում էր իր շունը:

«Ինչո՞ւ, միթէ նրան չէր կարելի թաղել»:

Եւ պահ մի, իր մենակութեան մէջ անգամ, տարօրինակ
թւաց շան թաղելու միտքը: Դրա համար մի շարժումով ուղ-
ղեց իր նստածքը և աշխատեց ուշադիր լինել ընթերցանու-
թեան մէջ:

«Օ՛խ, ի՞նչու են մարդու զգացումները շղթայւած, ինչո՞ւ
պէտք է տարօրինակ համարել այն, որ մենք ցաւում ենք մի
շան մահով...»:

Որքան տարօրինակ լինէին նրա մտածումները, այնուա-
մենայնիւ, այդ օրը ո՛չ միայն ինքն էր տխուր, այլև կինը:
Երեկոյեան կարծես իրենցից և ո՛չ մէկը ցանկութիւն չունէր
խօսելու:

Իայց ի՞նչու կինը չէ կանչում իրեն թէյի:

Եւ յանկարծ ոտքի կանգնեց ու անցաւ սեղանատուն—
կնոջ մօտ:

Սենեակը ողողւած էր ելէքտրականութեամբ, իսկ կինը
պառկած էր տախտի վրայ, մանկան մահճի մօտ՝ շալն ուսին:

Զգուշութեամբ ճոճեց թևից՝ մի քանի անգամ տալով
անունը:

Տիկինը յանկարծակի բացեց աչքերն և ելաւ՝ ծանր ու
տխուր:

— Անկողինները պատրաստիր, Փառիկ:

Ու նստեց ինքնաեռի մօտ և լցրեց իրեն համար թէյ:
Տիկին Փառանձեճն էլ մօտեցաւ սեղանին, լցրեց իր
բաժակը: Ստեփանը մի հայեացք գցելով կնոջ վրայ ասաց.

— Դու այսօր ինչ որ տարօրինակ ես երևում:

— Գիշերի սատկելն ինձ վրայ շատ վատ է ազդել:

— Դէ ինչ անենք:

Տիրեց լռութիւն: Քիչ յետոյ Ստեփանը մեղմ ժպիտով
հարցրեց.

— Զիզին լաց չեղա՞ւ, երբ շանը տանում էին:

— Ո՛չ, նա չտեսաւ, — ասաց կինն ու շարունակեց, — այսօր
տախտի վրայ նստած նա ձեռքն ու ոտքը շարժում էր, ժպտում
իրեն-իրեն, և երբ ոչ ոք չէր շօշափում նրա դէմքը, ինչպէս
որ անում էր Գիշերը, նա երբեմն-երբեմն ճղաւում էր:

— Խեղճ Զիզի, — վշտացաւ հայրը:

— Այսօր, երբ մայրս իմացաւ շան մասին, բարկացաւ,
թէ ինչո՞ւ էինք պահում նրան ու ասաց. «Երբ տան մէջ շուն
է սատկում, դա լաւ նշան չէ»:

— Ի՞նչու:

— Դժբախտութեան պատճառ է դառնում, ասում էր նա:
Ստեփանը լսեց այդ բոլորը լարւած ուշադրութեամբ և
պոռթկաց.

— Իսկ դո՞ւ, հաւատացիր ի հարկէ այդ բոլորին:

Եւ նա ոտքի ելաւ ու առանց պատասխան սպասելու
դիմեց առանձնասենեակ: Վառեց ծխախոտը, մի փոքր
ետ ու առաջ արեց սենեակի երկարութեամբ և յետոյ, կարծես
թուլացած, ընկաւ մի սուերոտ բազկաթոռի վրայ, խորասուզ-
ւեց իր լուռ բարկութեան մէջ:

Քիչ յետոյ ներս մտաւ Փառանձեճը.

— Ի՞նչու վրդովւեցիր:

— Որովհետեւ դու երեսայաբար կարևորութիւն ես տւել
մօրդ խօսքերին, և յետոյ... Դու չգիտես, որ մի փոքր հաւատ,
և կարող է ճշտւել:

Փառանձեճը պահ մի կանգնած միաց սենեակի կենտրո-
նում. ապա խօսք չգտնելով ամուսնուն պատասխանել՝ դանդաղ
մօտեցաւ գրասեղանին, ձեռք գարկեց բաց ամսագրին ու
ստուգեց գրքի ինչ լինելն և նորից բանալով թղթեց տեղը:

Կնոջ խոհեմ լռութիւնը կամաց-կամաց իջեցրեց Ստեփանի
վրդովմունքը:

— Շո՞ւտ ես պառկելու, — ճնշող լռութիւնը խանդարեց
Փառանձեճը, շուռ գալով ամուսնու կողմը:

— Պատրաստիր անկողիները, — շշնջաց Ստեփանը:

Փառանձեճն շտապեց ննջարան՝ ստեղծւած ծանր դրու-
թիւնից ազտւելու համար:

Սոսաւօտն ամեն բան սովորական էր: Ինքնաեւր թըշոււմ էր սեղանի վրայ: Բաժակներ, հաց, պանիր, կարագ, մեղր— բոլորն էլ սովորականի պէս իրենց տեղերումն էին: Տիկին Փառանձեմը թէյի բաժակները լցնելով՝ մէկը դրեց ամուսնու առջև ու նորից զբաղւեց տան սարք ու կարգով, իսկ Ստեփանը թիկն տւած սեղանին ուտում-խմում էր, միաժամանակ կարգում օրւայ լրագիրը: Քիչ յետոյ երեխան անհանգիստ շարժումներ արեց ու ճչաց: Մայրը դուրս հանեց երեխային երկաթեայ օրօրոցից, համբուրեց ու թոթովախօս մանկան պէս սկսեց խօսել Զիզիի հետ:

Փոքր անց Ստեփանը նայեց ժամացոյցին, ապա հագաւ շորերն ու անխօս վերցրեց պորտֆէյլը՝ գնաց գործի:

Գրասենեակումն էլ ամեն բան սովորական էր, նոյն գրասեղանն ու օգնական հաշւապահները, նոյն հանգարտ հարց ու պատասխանները և մատեանների թերթումը, նոյն մաքուր արտագրութիւններն ու ցուցումները...

Մինչև իսկ հեռախօսը սովորականի պէս զրնգաց գրասենեակի անկիւնում, օգնականներից մէկը վեր ելաւ ու մօտեցաւ նրան:

Խնդրում էին պարոն Ստեփանին, որը չյասլաղեց վերջացնել կարճ հաշիւն ու ապա մօտենալ հեռախօսին:

Եւ այս անգամ նա հեռախօսից հեռացաւ ոչ սովորական: Արտակարգ շփոթութեամբ դուրս գալով գրասենեակից, նստեց կառք և շտապեց տուն:

Տուն հասնելուն պէս նա դիմեց երեխայի մահճակալին, բացեց դէմքը և մնաց ապշած: Զիզին սպրզնել էր: Փառանձեմն էլ շփոթ ու մռայլ հագնւում էր շորերը: Հարց ու փորձ արեց երեխայի հիւանդութեան մասին ու ապա անցաւ իր սենեակը: Զգաց մի սալ սուռ և ձեռները տարաւ գրպանը:

Քիչ յետոյ նա ջղայնաբար մօտեցաւ դրան, բացեց ու նայեց կնոջը: Փառանձեմը արդէն հագնւել էր և թեթև շալն էր գցում գլխին:

Ստեփանը լուռ աճապարանքով երեխային առաւ գիրկը՝ դիմեց փողոց՝ կառքի մօտ:

Ճանապարհին չէր խօսում կնոջ հետ: Մտածում էր այն մասին, թէ ինչպէս գոքանչի գուշակութիւնը իրականաւոր վրայ էր:

Երեխան շարժւեց հօր գրկի մէջ: Սմուսիները իսկոյն հայեացքները մօտեցրին մանկան և բացեցին դէմքը: Նրա աչքերը փակ էին, իսկ դէմքը պաղ:

Ստեփանը սրտի ցաւից ուշքը դարձրեց տների պատերին՝ իմանալու, թէ մօտեցել են բժշկին: Իսկ Փառանձեմն անհանգստութիւնից սկսեց լալ՝ դէմքն առնելով թաշկինակի մէջ:

Ստեփանը պահ մի կորցրեց իրեն: Թւաց թէ կառքն իրենց անդունդն է տանում:

— Ինչո՞ւ ես լալիս, — դարձաւ կնոջը:

— Մայրիկ ջան... Ի՞նչ անեմ...

Ստեփանը շճած հայեացքը հեռացրեց կնոջից և թուլացած մարմինը թեքեց կառքի մէջ:

Կառքը կանգնեց բժշկի դրան առջև և նրանք բարձրացան վեր:

Բժիշկը քննեց երեխային և ապահովեցրեց, որ պատւիրած խնամքը կազատի երեխային դժբախտ հետևանքից և մի քանի օրից կառողջանայ:

Ամուսինները միամտւեցին, նայեցին միմեանց երեսին և հանգիստ ժպտացին:

Կինը երեխայի հետ կառքով վերադարձաւ տուն, իսկ Ստեփանը դիմեց մօտակայ դեղատուն:

Մի ժամից Ստեփանը տանն էր: Իր ձեռքով խմեցրեց դեղը երեխային և բժշկի պատուէրները յիշեցրեց կնոջը:

Վտանգի դէմ առաջին քայլն անելուց յետոյ, Ստեփանը մի փոքր հանգիստ զգաց իրեն և յետոյ, անյարմար համարելով դեռատի կնոջը թողնել հիւանդի մօտ մենակ, մտքում կայացրեց մի ակամայ որոշում ու դիմեց կնոջը.

— Հանդիպե՛մ մօրդ, որ գայ քեզ մօտ, մենակ ես:

Տիկին Փառանձեմի շճած ու տխուր դէմքի վրայ փայլեց մի մեղմ ժպիտ: Ամուսինը հասկացաւ իր կնոջը և դժկամօրէն դուրս ելաւ տնից:

Ստեփանը գոքանչին դրկել էր տուն, իսկ ինքը գտնւում գրասենեակում:

Գլուխը յենած մի ձեռի վրայ, միւսով գրում էր: Շուտով ծալեց հաշւեղիրքը և դրեց գրքակալի մէջ:

Մտածում էր Զիզիի մասին: Սիրտը կարծես տեղահան էր լինում, երբ երևակայում էր թէ մանկանը կարող է մի բան պատահել: Յետոյ շունն եկաւ նրա մտքի մէջ: Զիզին վերջերը սովորել էր խաղալ նրա հետ, քաշքշել նրա սև գանգուր մազերը. իսկ Գիշերը չէր հաջում: Յաճախ, երբ երեխան նստած էր լինում տախտի վրայ, շունը փռւում էր նրա ոտ-

քերի մօտ իր յաղթ մտրմնով և կարծես հսկում նրան իր համբերատար աչքերով:

Ուզեց զբաղել մի որևէ գործով, բայց գլուխը տրամադիր էր ցաւել: Ելաւ տեղից և հրամայեց փոքրերից մէկին բանալ լուսամուտը: Կանգնեց նրա առջև:

Փողոցը եռ ու վեռի մէջ էր. մարդիկ, կառքերը արագ անց ու դարձ էին անում. իսկ ետևում գրասենեակը եռում էր համրիչների արագ չըխշխկոցներով:

Ձգաց, որ իր ձեռները գրպանումն են, որ ինքը կտրւած է գործից: Եւ ջղայնաբար մրմնջաց.

«Ինչո՞ւ, ինչու պէտք է ունենայինք այն սև՝ շուներ»:

Նրա ջղերը կարծես սկսեցին թուլանալ. զգաց, որ ինքը, Ստեփան Մուլիքեանը, հաշուեց իր կնոջ երեկւայ ցանկութեանը - «Երանի շուներնայինք շուներ»:

Եւ թւաց, թէ իր տան դուռը փշրւեց ու ներս սողած ոքանչը՝ երկար չոր հասակով ու թափթփւած ատամներով: Գ

Շրջւեց պատուհանից՝ ձեռը ճակատին: Ու երբ գրասենեակի արկղից հանեց ծխախոտը՝ մտքից հանդարտ հոսում էր այն միակ մխիթարական բանը, որ կինը չգիտէ թէ ինքը համաձայնուել է նրա հետ: Ինքը կաշխատի իր մտքի և կամքի ուժեղութիւնը պահպանել ու մնալ սովորական պարոն Ստեփանը:

Երեկոյեան Ստեփանը սովորականից վաղ տուն եկաւ: Բակի դռնից նա նայեց կարճ սանդուխքի տակ գտնւող թափուր շան բնին, իսկ բարձրանալիս՝ ուշքը դարձրեց դէպի խոհանոցը և տեսաւ զոքանչին զբաղւած: Նոյն հանդարտ քայլերով նա մտաւ նախասենեակը և առանց վերարկուն հանելու զգոյշ բացեց սենեակի դուռը:

Ձիզիի ձայնը չէր լսւում, իսկ կինը, որ նորից պառկած էր պախտի վրայ՝ շալը ուսին, դռան ձայնից բարձրացաւ տեղից:

— Մայրդ եկել է, — աւամայ հարցրեց Ստեփանը հայեացքը պահելով կնոջ վրայ:

— Այո՛:

— Հիւանդ ես:

— Ձէ, յոգնած եմ:

— Ձիզի՞ն, — հարցրեց ու կամաց-կամաց մօտեցաւ նրա մահճակալին:

Փառանձեմը նստած տեղից պատասխանեց.

— Երևի կը լաւա՛յայ:

Երեխայի դէմքը տեսնելուց յետոյ, պահ մի կանգնած մնաց իր տեղում, ապա շրջւելով կնոջ կողմը ասաց.

— Ես գնացի: Գիշերս ուշ կը գամ. կլուբում կը լինեմ: Եւ դուրս ելաւ տնից առանց զոքանչի կողմէ նայելու:

Երբ վերադարձաւ, բոլորը քնած էին:

Առաւօտը զարթնեց բաւականին ուշ: Փառանձեմի ու մօր ձայնը լսուով էր խոհանոցից: Զոքանչը խօսում էր ինչ որ մատաղ անելու մասին:

Ելաւ տեղից, հագնւեց և մտաւ խոհանոց լացւելու: Զոքանչը շարունակում էր փնթփնթալ, որ ջահիլները չեն լսում մեծերին:

Ստեփանը քնաթաթախ հազիւ էր գտնուով բարկութիւնը և ձայն չէր հանում: Աշխատում էր ամեն ինչ արագ կատարել, որպէսզի հեռանայ տնից:

Բայց թէյ խմելիս զոքանչը հարցրեց.

— Տօ, Ստեփան, քեզ էլ հօ բան-մ սն չի՞ պատահել:

Ստեփանը նայեց նրա դէմքին և պատասխանեց.

— Ինչ պիտի պատահած լինի:

— Ինչ իմանամ, որդի, թթւած ես Լրէլում... Ձեռ խօսում:

Ստեփանը առանց պատասխան տալու ելաւ և դուրս եկաւ տնից: Եւ երբ աստիճաններից ցած էր իջնում լսեց դռան յանկարծական բացումը և յետոյ զոքանչի կանչը.

— Տօ, տօ, դէնը, դէնը, ոտդ չը դնես շան բնի մօտերքը. իմացիր...

Ստեփան Մելիքեանը բ՛ազդամամբ քայլերը շեղեց շան բնից: Եւ այդ կատարւեց այն ժամանակ, երբ նա մտքում հայհոյանքներ էր թափում զոքանչի «բայդուշ» գլխին:



ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

(Առակ)

—Ա՛յ անիծւի էսպէս տարին,
Աստուած էրի յանցաւորին,
Որ ժանտախտը մեր ջանն արեց
Ու մեզ մահւան դուռը հանեց:
Դէ, ասացէք,
Ա՛յ անիծւէք,
Ձեր մեղքերը մէկ-մէկ պատմէք,
Եւ մեզանից ով Արարչին
Բարկացրել է, թող նա կորչի,
Որ ազատենք էս աղէտից:
Էսպէս ճառից առիւծ արքան,
Նիստը բացւեց, գործի անցան:
Ու շատակեր գայլը ասաց՝
Քանի մարդ էր անուշ արած.
Արջն էլ թւեց իր վասսած
Պատառոտած
Անմեղ մանկանց.
Աղւէսն էլ հօ համար շունէր,
Էլ ինչ ասես, որ չէր արել:
Էսպէս բոլոր գազանները
Ասին իրենց յանցանքները:
Եւ բոլորն էլ ծափեր ստացան,
Վերջը հերթը իշին հասաւ.
«Ամռան շոգ օր,—
Մեծ թագաւոր,
Սոված փորով
Անցնում էի
Վանքի բակով:

Վանքի կանաչ խոտից շմամ՝
 Մէկ էլ բերնիս ջուրը գնաց.
 Ու մի փունջ խոտ բերանս առած
 Առաջ անցայ, Տէր Վեհապանծ:
 Էս է մեղքս, այ ընկերներ,
 Ուրիշ յանցանք ես չեմ արել»:

— Ի խնչ,

Ի խնչ...

Արքան գոռաց,

Ասում էլ է, չի ամաչում,
 Էշն ինչ ունի սրբատեղում,

Օր ցերեկով

Համարձակել

Թաքուն,

Թաքուն,

Վանքապատկան

Խոտ է կերել»:

— Ի խնչ,


Ի խնչ...

Բոլորն ասին

Ու անլիզու խեղճ հայւանին

Մի շնչի մէջ գետին դրին:

Գիսակ



Մ Է Կ Ը

Մայր մտնող արևի շողերի մէջ նա նշմարեց Լիւսիի տնակը:
Իջաւ հիւրանոց:

Ամեն ինչ փոխւած էր. անծանօթ էին, պատահական բո-
լոր դէմքերը, անճանաչելի—և՛ ինքը: Քառասունին մօտ էր և
մազերն սկսել էին սպիտակել: Թոքախտը ձայնի մէջ և մահն էր
ծիծաղում աչքերից: Նրան այնպէս էր թւում, որ դա ինքը
չէ, որ կեանքը վաղուց է անցել, բայց ինքը երբ և իցէ, մի
անգամ էլ ապրել է ճիշտ այդտեղ:

«Ո՞ւր է Լիւսին և ի՞նչ է անում հիմա»,—կրկնում էր
յանգերգի պէս: Թւում էր՝ դեռ նստած է նա պարտիզում՝
չարածճի ժպիտը դէմքին և դեռ սիրում ու կատաղեցնում է
իրեն, մեղմիւ շշնջալով:

— Ո՛չ, պարոն Վահան, ես քար չեմ գցի հայրենիքի ուխ-
տի ճանապարհին, թող մի երազ էլ մեր սէրը լինի... Գնացէք,
ես անարժան եմ...

Կամ ահա՛ պատշգամբին կանգնած, նայում է վերջին,
անծայրածիր ակնարկով, դժգոյն և թախիծների մէջ էլ աւելի
գեղանի:

Անընդհատ ծխում էր նա՛ պատշգամբի ծայրին մեխւած.
ներքև հոսանուտ, լեռնային գետակն էր աղմկում՝ վհատ,
միակերպ ու տարտամ: Ոտքերը ցաւում էին, գլուխը պտոյտ
էր գալիս, տաք էր ճակատը և մարմանդ այրւում էին մարմ-
նի մասնիկները: Նա քաշեց սենեակն ու ընկաւ մահճակալին,
փակելով դուռն ու պատուհանները: Լռութիւն:

— Պարոն, թէյ չէ՞ք կամենայ,—դուռը բանալով հարցրեց
սպասաւորը:

— Ո՛չ, — պատասխանեց նա մտազբաղ և հարցրեց.

— Դու ճանաչո՞ւմ ես Տիգրան Գէորգեանին, նա մի ժա-
մանակ ուսուցիչ էր:

— Յետոյ գիւղատնտես դարձաւ, գիտեմ, — յայտնեց սպա-
սաւորը աւելի ու աւելի մօտենալով:

— Նա այժմ այստե՞ղ է:

— Այո՛:

— Դէ՛ գնա կանչիր:

Սպասաւորը գնաց. խաւարն սկսեց թանձրանալ: Գլխի ցաւը սաստկացաւ, վհատութիւնն անձկութեամբ սլարուրեց նրա հոգին և փոթորկոտ կեանքի ընթացքում առաջին անգամ զգաց, որ անոք է ու մենակ:

Դուռը բաղխեցին: Բացեց:

— Վահ, մութն է,— լսեց Գէորգեանի բամբ ձայնը վաղեմի անցեալի մշուշոտ պատկերները արթնացնելով Վահանի յիշողութեան մէջ:

Սպասաւորը վառեց լամպը:

— Ներեցէք, — խօսեց նորեկը, — թէև ինձ կանչել էք, բայց ճիշտն ասած...

— Ձեռ ճանաչում. իսկ ես ճանաչեցի, — նկատեց Վահանը ժպտալով, ապա աւելացրեց. «Վահանն եմ»:

Վաղեմի ընկերները գրկեցին իրար ու նստեցին դէմ առ դէմ:

— Տնաշէն, — խօսեց Գէորգեանը, — մէկ պատմի սրտեղից ես գալի է: Համբաւդ մէկ բանտից էր գալիս, մէկ սահմանի այն կողմից, ասող կար, որ Ամերիկա էլ ես գնացել... Բա... էդ ի՞նչ է, տօ, — գոչեց նա, — ից իւ հիւանդ ես, հը՞:

— Ձէ, փոքր ինչ յոգնած եմ գուցէ:

— Ի՞նչ երկար միւրուք ես շահել:

Վահանը շլտեց նրա այս բառերը, մինչդեռ Գէորգեանը շարունակեց. «Դէ, ես էլ թողի ամեն ինչ՝ թէ-օրիս, ու տօպիս, ֆան-տազ-իս ու ինչս ինձ նւիրեցի... Հիմա կին ունիմ, երեխաներ, տու՞, տեղ, դիրք, անուն...»

— Ու գո՞հ ես քո կեանքից, — ընդհատեց Վահանը:

— Դժգոհելու հիմունքը գոյութիւն չունի:

— Իսկ ափսոսալո՞ւ:

— Ի՞նչը պիտի ափսոսամ եթէ ես էլ վարւէի քեզ պէս... Կարծում ես դու կը զղջայի՞ր, եթէ ինձ նման քաշւէիր մի անկիւն և լուռ ու մունջ արեիր ձէնն ածէիր...

— Իսկ եթէ չկայ այդ արևը, Գէորգեան, իսկ եթէ մենք խեղդւում ենք, — յուզւած նկատեց Վահանը:

— Խելքս բան չի կտրում, — պատասխանեց Գէորգեանը և լռեց, հայեացքը ման ածելով սենեակի մէջ, կարծես պատասխան փնտրելով, ապա ասաց.

— Իսկ յիշո՞ւմ ես, որ դու ինքդ էլ սիրահարւած էիր: Քեզ սպասում էր երջանկութիւնը, բայց քամիներդ քեզ հանգիստ չտւին:

Վահանը դողում էր ներքին ցասումից Գէորգեանի իւրաքանչիւր բառը սղոցում էր նրա նեարդերը:

— Բայց գիտե՞ս ինչ Լիւսիին գօռով՝ ոսկիներով ամուսնացրին էն Տգրուկի տղայի հետ:

— Իսկ ի՞նչ արտասովոր բան, քո սիրո՞՞ծ իրականութեան սովորական մի էջ: — Վշտաւած Կատեց Վահանը մի հայեացք ածաւ շուրջը, դէմքը ցնցում գործեց ու ասաւ ձեռքերը շփելով.

— Թող վառեն այդ վառարանը... Այստեղ ցուրտ է կարծես...

Սիրտը թպրտաց, կայլակեց յորդ և նա չգիտէր՝ արի՞ւն է այն, թէ արցունք: Ոչքերն աղօտացան, մութի գնդակները մեղունների պարսի սլէս խաւար արին սե՛րեակում, ուր ամեն ինչ շարժւում էր ու իր տեղը պտտւում: Ճիշդ գործեց յուզմունքը ծածկելու և բռնազբօսիկ ժպտալով դիմեց.

— Դու ասում ես, գնե՞ց:

— Ո՞վ գիտէ, բայց ավստ՞ս Լիւսի:

— Այո՛, — աւելացրեց Վահանը անտարբեր ձևանալով, — նրա հոգին թռիչքի էր կարօտ...

— Դու սիրում էիր... եւ թողիր...

— Այդպէս եղաւ, — պատասխանեց Վահանը, — բայց այժմ...

Ես իսկապէս մոռացել էի ամեն ինչ... Իսկ յուշեր քրքրելը լաւ բան է. խարոյկ է կեանքը, այրում է, բայց միշտ էլ կարող ես մոխիրները քրքրել, ջերմանալ...

Եւ մեղմութեամբ խոնարհելով զլուխը կրծքին նա ամբողջապէս վերջիշեց սէրը վաղեմի և արիւնոզող հայրենիքը նրա հանդէպ, որ կանչում էր գիշեր ու ցերեկ, յիշեց հրաժեշտի վերջին պատկերներն ուրուկանային, որ անցան ու դարձան իրար ետևից, յիշեց ընկերները՝ կորած, նահատակ, կախողանն արիւնոտ և սառնամանիքը հիւսիսի:

Ապա շնչաց՝ բայց այնպէս մեղմիւ, որ խօսակիցը չլսեց:

— Ներեցէք:

— Դէ, հանգստացիր, — ասաց Գէորգեանը, — վաղը նորից կը տեսնուենք:

Մենակ մնաց դարձեալ. զով ու լուսնեակ գիշեր էր. լիալուսինն անտառապատ գահաւանդներից ու ամպերից սրբում էր խաւարը Գետակն էլի աղմկում էր, այս անգամ անհամար թելերով իր աղմուկին հիւսում նրա թախիժն ու ցրում գիշերի անհունութեան մէջ:

Վաղ ելաւ առաւօտեան, ու բարձարացաւ դէպի մայրինե-
րի պուրակը:

Մի անգամ միայն կանգ առաւ նա, նայեց դէպի վար,
որոնեց երկար: Պարտէզը չկար, նրա տեղ բարձրանում էր նո-
րաշէն տունը՝ երկար ու լայն սուերի շերտը փռելով զով քա-
մուց մեղմիւ տարուբերող նորատունկ ծառերի վրայ: Բա-
կում սուր ու զւարթ աղմուկով խաղում էին մանուկները.
աղախինը շորեր էր փռում պատշգամբում: Սենեակներից մի
քանի անգամ դուրս ու տուն արաւ պառաւ կինը, որ կարծես
մի բան էր կորցրել և որոնում էր:

Երկար դիտեց, ապա շարունակեց վերելքը:

Յիշեց, որ սյդատեղ երբեմն կար հովասուն մի ծառ, որի
տակ նստում էին: Այն ծառի կեղևին պատանեկան աւիւնով
քանդակել էին իրենց անունները: Փնտրեց, բայց՝ ապարդիւն.
նոյնիսկ մօտեցաւ իւրաքանչիւր ծառին, զննեց կեղևները,
զննեց փտած կոճղերը և ոչինչ չգտաւ, բացի անծանօթ ու
անյայտ բազմաթիւ անուններից: Նստեց մի ծառի տակ:

Նրան թւաց, որ ահա կը յայտնւի կիւսին: Հեռւից ձայն
կը տայ, գաղտագողի կը մօտենայ, կը շրշան թափւած տե-
րևները ոտքերի տակ, թեթև կը խօշիւնեն թփերն ու կը
կանչի նա զանգակի ձայնով.

— Թէ գտնես:

Ապա կը յայտնւի յանկարծ, կը ժպտայ նազով և այ-
ծեամի արտորանքով կը նետւի գիրկն ու սևորակ, անհուն
հայեացքի մէջ կը ցոլանան մարգերը, ծաղիկները, հովիտը,
ձիւնաթոյր մռայլ լեռն ու ալեկոծող կարմիր վերջալոյսը
եղեմական գունագեղութեամբ:

Անտառի խորքից ծաւալող ջութակի կերկերուն նւագ-
ները սթափեցրին նրան: Շուրջը ոչ ոք չկար:

Սիրտը կսկծաց կարօտից, վեր կացաւ, վերարկուն գցեց
ուսին և սկսեց հանդարտ իջնել:

Կէս օր էր. անցաւ աղմկոտ փողոցն և մօտեցաւ նորաշէն
տան բաց դարպասին: Աղախինը հաւաքում էր շորերը, իսկ
պառաւն ակնոցները քթին բրինձ էր ջոկում:

— Ո՞վ է բնակւում այս տանը, — մօտեցաւ և դիմեց պա-
ռաւին:

— Բժիշկ Սիլիկեանը, — պատասխանեց աղախինը:

— Միայն:

— Այո:

— Ներեցէք, իսկ ո՞ր է բնակւում տանտէրը:

— Տիգրան Սարեանը, որդի, — հարցրեց պառաւը:

— Այո, հենց նա ինքը:

— Տանտէր Սարեանը բնակւում է դիմացի տանը, ինքն այժմ այստեղ չի լինի. գուցէ կինը...

— Շնորհակալ եմ, — ասաց և հեռացաւ:

Դիմացի տան առջև փթտել էր փոքրիկ ծաղկոցը, պատաստուկներն ու բաղեղները կանաչ վարագուրով հովանի էին անում պատշգամբին: Արևի ճառագայթները ողողել էին ծաղկոցը, իսկ պատշգամբը սոււերի մէջ էր: Տանկապատի դռնակը հանդարտ տատանւում էր ծկոնի վրայ:

Կանգնել էր դիմացի մայթին, պղտոր ակնարկը յառել այնտեղ: Տունը հեռու էր, շատ հեռու ու հեռանում էր հետզհետէ և անջրպետն ընդարձակւում էր աստիճանաբար:

Պրքերը ձեռքին պատշգամբն ելաւ՝ մօտ տասը տարեկան մի տղայ և սկսեց կարգալ. «Փամանակով կատուն ձօն էր...»: Քիչ անց, շէմքին երևաց միջահասակ մի կին, որ մօտեցաւ և նստելով տղայի մօտ, ուղղում էր նրա ընթերցանութիւնը:

Նա լարեց ուշքը. ամբողջապէս տեսողութիւն ու լսողութիւն դարձած, և կլանում էր կնոջ իւրաքանչիւր շշուկը. ականջների մէջ հետզհետէ նւաղեց, մարեց, անլսելի, անզգալի դարձաւ կնոջ ձայնը:

Վերջին պահուն կինը նկատեց նրան և օտարոտի ու խէթ նայեց ոտքից գլուխ, փոքր ինչ շիկնելով նրա յամառ ակնարկից.

«Գուցէ նա չէ».— անցաւ մտքով. Զայրոյթ եռաց հոգու մէջ: Կանգնել այդտեղ և դիտել, զննել, բայց ո՞ւմ և ինչի համար: Վրդովել մէկին, երբ նստած է նա իր խաղաղ յարկի տակ, գոհունակ, երջանիկ և խոովել նրա անդճրը: Վերջապէս իր ինքնասիրութիւնը, միթէ արժէ այդ բոլորը դիցուք մի Լիւսիի համար, որ գուցէ վաղուց մոռացել է իրեն:

Քայլեց մի այլ ուղղութեամբ, յուզմունքից դողում էր, սառն քրտինքը ծածկել էր ճակատը: Քայլեց քիչ էլ և խորտակւած ընկաւ քարերի կոյտի վրայ. հանեց տուփը, վառեց պապիրոսը և սկսեց ազահաբար ծխել:

Նա ցնցւեց. «Բաւական է, — գոչեց լսելի, — վերջ պիտի ունենայ»: Մենք ամենքս օտարներ ենք երկրի վրայ, օտարներ, որ այնքան ենք խորթանում աշխարհից, որքան երկար ենք մնում: Ի՞նչ գործ ունի ինքն այդտեղ, ինչի՞ համար և

հում համար է եկել: Այո, այո, իսկոյն կը վերադառնայ հիւրանոց, նորէն կը կապկպի իրերը և դարձեալ դէպի հեռուներ, դէպի ժխորը, փրկարար, հանգուցիչ և սրբազան պայքարը: Իսկ այդ կինը, թող մնայ այստեղ իր պատշգամբում...

Ակնթարթ և նորէն մի պատկեր խաղաց երևակայութեան մէջ՝ պայծառ ու սիրելի, որ գարուն էր փռում հիւսիսի սառնամանիքների և ամայութեան մէջ:

Դարձեալ մօտեցաւ ցանկապին:

Տիկինը նկատեց նրան, վեր կացաւ տեղից և ընդառաջեց:

— Բարև — թռաւ նրա լեզուից, և նա այնպիսի շարժում գործեց, ասես՝ փորձում էր բռնել այդ բառը:

— Ի՞նչ էք կամենում, պարոն, — հարցրեց տիկինը, շիկնելով նրա յամառ ակնարկից:

— Չէք ճանաչում, — վրդովւած հարցրեց նա:

Կինն էլ աւելի շփոթւելով ապշած նայեց նրան և հայեացքը խոնարհելով շշնջաց. «Ո՛չ, չեմ յիշում»:

— Օրիորդ ժամանակ ձեզ կոչում էին Լիւսի, — ասաց նա, շեշտելով իւրաքանչիւր բառը և ուղիղ նայելով կնոջ աչքերին:

— Ասենք թէ... Լիւսի... — ասաց կինը ժպտալով, — բայց ես... Անկեղծ չեմ յիշում... Գուցէ դուք բնակւել էք մեր տանը և այժմ էլ սենեակ էք կամենում:

— Գուցէ, — սսան ասաց նա, — ներեցէք, անձանօթ էի երևի սխալւել եմ: Ապս լուեց և իսկոյն աւելացրեց.

— Ես, իսկապէս, ցանկանում էի փողոցը հարցնել: Ես մի անգամ էլ անցել եմ այս փողոցով, կարծեմ այն պարտէզը... — Մատնացոյց արաւ նորաչէն տունը, — այդտեղ մի ժամանակ պարտէզ կար... Ներեցէք...

Եւ հեռացաւ հապճեպ: Երբ բաւականին անցել էր, վերստին յետ նայեց. տիկինը դեռ զարմանքով դիտում էր տարօրինակ անցորդին, իբրև թռչունը վանդակի մէջ, որ հեռւում ինչ որ բան էր որոնում ու ձգտում:

— Իմ խեղճ Լիւսի, — շշնջաց նա, արցունքները խեղդելով կոկորդի մէջ, — որքան փոխւել է:

Նրա աչքերը թացացան և մտմտում էր աղօթքի պէս. «Մենք բոլորս մանուկներ ենք, մանուկներ ենք մենք բոլորս, որ խաղում ենք կեանքի հետ, վազում նրա հետքից, առանց երբէք հասնելու»...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
«ՊՈՏԱՆԻ»-ի ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ	3
Վ. ՎՍԼԱԴԵԱՆ—Ձոքանչի մահը	5
ՍՐՇԱԻԻՐ ԽՈՆԴԿԱՐԵԱՆ—Իմ այցելու (բան.)	15
ՌԱՖԱՅԷԼ ՉՍՐԴԱՐԵԱՆ—Օրագիր	16
ՍՏ. ՉՕՐԵԱՆ—Պապն ու թոռը	17
ԱՐՄԵԼՈՒՀԻ ՏԻՊՐԱՆԵԱՆ—***, Աչերիդ (բան.)	23
ՎԱՐՍԵՆԻԿ ԱՂԱՍԵԱՆ—** (բան)	24
Ն. ՍՖՐԻԿԵԱՆ—Սօնէտ (բան.)	24
Մ. ԷՓՐԻԿ—Ընկերոջս օրագրից	25
ՊԱՀՍՐԷ—Անմահութեան երգը (բան)	34
ՄԵԾԱՏՈՒՆԵԱՆ—Հաշտութիւն (բան)	34
Ն. ՏԻՐՈՍԵՆՑ—Ստեփան Մելիքեան	35
ԳԻՍԱԿ—Կենդանիների ժողովը (առակ)	41
ԱԻԱԳ ԿՈԾԻՆԵԱՆ—Մէկը	43

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽԻ

Խմբագրութիւնը որոշել է մրցանակ տալ մի պատմաձեռքի և մի բանաստեղծութեան համար, մրցանակին մասնակցել ցանկացող երիտասարդ գրողները (1909 թ. յետոյ ասպարէզ եկած) գրաձեռքները պիտի ուղարկեն հետևեալ պայմաններով.

1. Պատմաձեռքի ձեռագիրը լինելու է տետրակի մինչև 40 երես, իսկ ոտանաւորը 5 տունից ոչ աւելի:
2. Մրցանակ տարած նիւթերը պէտք է տպւեն Ալմանախում:
3. Պատմաձեռքին մրցանակ տրուում է 50 ռ., բանաստեղծութեանը՝ 20 ռ.:
4. Մրցանակի նիւթերի վրայ պիտի գրել՝ «մրցանակի համար», իսկ հեղինակների անունները պէտք է լինին առանձին փակ ծրարներում, որոշ պայմանական նշանով:
5. Մրցանակի արժանացած հեղինակների անունները պէտք է բացւին այդ առիթով կազմակերպւած երիտասարդ գրողների երեկոյթին:
6. Մրցանակը տանելու են ստացւած նիւթերի մէջ եղած յաջողները:
7. Նիւթերը պէտք է ուղարկել մինչև առաջիկայ ապրիլի 1-ը, հետևեալ հասցէով՝

Тифлисъ, Ходживанская 5, М. Эприкянъ.

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՇՐԱՏԱՐԱԿԻՈՂ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽԻ

1917 թ. վեՅ ԳՐԳԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 Ռ., ՀԱՏԱՎԱՃԱՌ 70 ԿՈՊ.

Իւրաքանչիւր գիրք բաղկացած է լինելու 48 մեծադիր էջից:
Թիֆլիսում բացի խմբագրատնից, բաժանորդագրւել կարելի է Գ Ի Ր գրատնտեսութեամբ: Խմբագրութ. հասցէն՝ Тифлисъ, Ходживанская 5, М. Эприкянъ,

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ. Բ ա թ ու մ—Արշակ Մարութեան, Բ ա գ ու —Աւագ Կոճիկեան, Բ ա լ ա խ ա ն ի—Ար. Բորեան, Ա լ է ք ս ա ն դ ը ա պ ո լ—Արշալիր Խոնդկարեան, Շ ու շ ի—Ս. Մուսայէլեան և Ն. Վարդապետեան, է ջ մ ի ա ծ ի ն—Գ. Ղազարեան, Գ ո ը ի—Գիսակ:



